Հիրավի, նշանակության հիմնահարցին անդրադառնում են բոլոր հոմանիտար գիտակարգերը: Այն տարբեր տեսանկյուններից է դիտարկվում լեզվաբանության, հոգեբանության և հոգելեզվաբանության կողմից: Նշված գիտակարգերից յուրաքանչյուրում նշանակությանը տրվել են միմյանցից տարբերվող մեկնաբանումներ, ինչը բոլորովին էլ պատահական չէ, քանի որ նշանակությունը կապված է լեզվի կիրառման հետ, և արդյունքում դժվար է ըմբռնել նրա իրական սահմանները: Լեզվական նշանակությունը մեզ հնարավորություն է ընձեռում գնահատել արտահայտած նախադասությունների իսկությունը, վերածնակերպել դրանք, մեկնաբանել արտասովոր իրադրությունները, հասկանալ երկիմաստությունը և օգտագործել բառերը դրանց փոխաբերական իմաստներով:

Հոգեբանությունը նշանակություն է համարում անձի կողմից պատմահասարակական փորձի ընդհանրացումը, որը ձեռք է բերվում ընդհանուր գործունեության և հաղորդակցման ընթացքում: Հոգեբանության տեսանկյունից նշանակությունն իր գոյությունը պահպանում է հասկացությունների միջոցով, որոնք առարկայացվում են հասարակական դերերի, նորմերի, արժեքների մեջ:

Լեզվաբանական տարբեր ուղղությունների կողմից առաջարկված նշանակության սահմանումները կարելի է ստորաբաժանել երկու տիպի: Դրանց մի մասը նշանակությունը հոգեկան արտացոլում է համարում, մյուսն այն վերագրում է լեզվական նշանի, առարկայի, հասկացության, իրադրության միջև գոյացող հարաբերություններին: Կառուցվածքային լեզվաբանության մեջ լայն տարածում է ստացել նշանակության՝ որպես նշանների փոխհարաբերության մեկնաբանումը: Նշանակության այս տեսակը կոչվում է կառուցվածքային կամ դիֆերենցիալ: Կառուցվածքաբանության տարբեր ուղղություններից նկարագրական լեզվաբանության մեջ զարգանում է նշանակության ուրույն տեսությունը: Լեզվական նշանակության ուսումնասիրության հարցում հոգելեզվաբանական մոտեցում կիրառելիս կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղվածություն.

կառուցվածքային մոտեցումը, որը որոշում է նշանակության չափանիշներն ու հատկությունները, և նշանակության՝ որպես գործընթացի ուսումնասիրության մոտեցումը, որի կիրառման ընթացքում ուշադրության կենտրոնում նշանակության հասկացման ու յուրացման խնդիրներն են:

Նշանակությունը, ինչպես նշվեց, ունի երկակի բնույթ. այն հասարակական է իր էությամբ, սակայն կարող է գոյություն ունենալ միայն անհատական գիտակցության մեջ: Գիտակցական ոլորտում նշանակության գործառույթի ուսումնասիրությունը ենթադրում է այնպիսի իրական հոգեկան գործընթացների ուսումնասիրություն, ինչպիսիք են անձնային նշանակություններն ու իմաստները: Հոգելեզվաբանների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես հասարակայնորեն մշակված, բայց անհատների կողմից յուրացված նշանակությունները: Ա. Լեռնտևալ գիտակցության մեջ դրանց գոյության ծև է համարում գործունեության ընթացքում բառերի կիրառման, դրանց հարաբերակցման համակարգը /տե՛ս Կոլիկօվ, 2001: 177/: Ի տարբերություն Ֆ. դե Սոսյուրի՝ Լ. Վայսգերբերը նշյալի և նշանակյալի փոխհարաբերությունը համարում է ոչ թե զուգորդային, հոգեկան կապ, այլ գործառույթ /Կոդոխօվ, 1976: 58/: Ըստ Գ. Ֆրեգեի՝ անվան իմաստն այն տեղեկությունն է, որն արտահայտված է անվան մեջ և միանշանակ կերպով բնութագրում է այս կամ այն առարկան: Մտապատկերը, ըստ Գ. Ֆրեգեի, սուրյեկտիվ, փոփոխական երևույթ է, որը հիմնված է հոյզերի վրա: Անգամ միևնույն մարդու մոտ տվյալ իմաստը տարբեր ժամանակներում տարբեր մտապատկերներ է առաջացնում: Եթե իմաստը սուրյեկտիվ է, ապա նշանակությունը օբյեկտիվ, այսինքն՝ կարող է շատերի ձեռքբերումը լինել: Այլ կերպ ասած, հոգեբանականը հավասարվում է անհատականին և սուրյեկտիվին, իսկ տրամաբանականը՝ ընդհանուրին և օբյեկտիվին:

Համարվելով հոլովական, զուգորդական բաղադրիչներով՝ նշանակությունը, բացի հասկացությունից ու մտապատկերից, պարունակում է նաև զգայորեն ընկալվող, այսինքն, հոլովական տարրեր: Նշանակությունը մի այնպիսի հոգեկան գործընթաց է, որում արտացոլվում են մարդու մտածողությունը, կամքը և զգացմունքները: Նշանակությունը որպես հոգեկան երևույթ դիտարկվում է նաև Գ. Սթեռնի, Գ. Կրոնասերի և Ա. Սմիռնիցկու աշխատություններում: Նշանակության անգամ ամենատարբեր մեկնաբանությունների դեպքում լեզվական նյութի և ծնկի ընդհանրությունը պահպանվում է: Տարբերակվում են դրա ուսումնասիրության ներլեզվական (ծնկի բովանդակություն) և արտալեզվական ուղղությունները: Լեզվական նշանակությունը որպես սուրյեկտի բազմակողմանի գործունեության հիմք համարելն ինքնաբերաբար բացառում է մտածական գործընթացի մեխանիկական լինելու հնարավորությունը: Եթե լեզվաբանությունն ուսումնասիրում է նշանակության յուրահատկություն-

ները, տեսակները, կառուցվածքը, ապա ժամանակակից հոգելեզվաբանության մեջ նշանակությունը մեկնաբանվում է որպես լեզվական գիտակցության միավոր:

Ա. Լեռնտևի հայեցակարգի համաձայն՝ նշանակությունը ոչ միշտ է ամրակայվում բառի կամ բառակապակցության մեջ, սակայն «լեզվական նշանակությունը դառնում է հասարակական գիտակցության հիմնական բովանդակությունը» /Լեօնտև, 1965: 188/: Ի տարբերություն նշանակության՝ իմաստն ստեղծվում է մարդու օբյեկտիվ վերաբերմունքով այն ամենի նկատմամբ, ինչը նրան գործողության է դրդում: Այլ կերպ ասած, իմաստը գիտակցության մեջ իրականության արտացոլումն է որոշակի կոնկրետ հատվածներով: Եթե Լ. Վիգոտսկին նշանակությունը համարում է առավելապես մտածողության և լեզվի միավոր, ապա Ա. Լեռնտևի համար այն նախ և առաջ գիտակցության միավոր է, որի դերը կարևորվում է իրականության ընդհանուրացված արտահայտմամբ: Ինչպես իրավամբ նշում է Ե. Տարասովը, Ա. Լեռնտևի կողմից առաջարկած իմաստի հայեցակարգը, ի տարբերություն այլ հոգեբանական հայեցակարգերի, կարևորվում է նրանով, որ այստեղ իմաստը դիտարկվում է ոչ թե որպես գիտակցությամբ ծևավորված երևոյթ, այլ որպես գիտակցության միջոցով առարկայի ու մարդու գործունեության միջև ծևավորվող փոխհարաբերության արտացոլում: Այս հայեցակարգը պարզ է դարձնում այսպես կոչված «իրադրական համատեքստային նշանակություն» ունեցող բառերի ծագումը /Տարասով, 1985: 84/:

Նշանակության դինամիկ լինելու գաղափարն արտահայտվել է Լ. Վիգոտսկու կողմից, որը նշանակությունը «մտքից բառ տանող ճանապարհ» է համարում: Սակայն այս գործընթացը բավականին բարդ է և հաճախ պարզ չի լինում, թե ինչ կա բառի և մտքի միջև: Եթե նախկինում խոսքը համարվում էր «մտքի զգեստավորում» (վուրցբուրգյան դպրոց) կամ հմտություն (բիիեվիորիզմ), ապա Լ. Վիգոտսկու մոտեցման համաձայն՝ միտքը ծևավորվում է խոսքում, կամ, ինչպես հենց հեղինակն է նշում, այն «կայանում է մտքում»: Հոգելեզվաբանության մեջ այս գաղափարն իր ծևակերպումն ու զարգացումն ստանում է Ա. Լեռնտևի մոտ: Վերջինս, նշանակությունը գիտակցության միավորների շարքը դասելով, այն դինամիկ գործընթացների ստորակարգություն է համարում:

Ինչպես վերը նշվեց, նշանակության հոգելեզվաբանական մեկնաբանումը հենվում է գործունեության տեսության վրա, համաձայն որի՝ առարկան արտացոլվում է մարդու գիտակցության մեջ դրա նշանակության միջոցով, քանի որ նշանակությունն առարկայական աշխարհի օբյեկտիվ կապերի որակի չափն է, աշխարհի և մարդու հարաբերակցությունը: Նշանակության դինամիկան կարող է ուսումնասիրվել կարգային կառուցների օնթոգենետիկ զարգացման ընթացքում: Իմաստային կա-

ռույցների քննությունը հոգելեզվաբանական մոտեցմամբ կօգնի բացահայտել խոսող անհատների լեզվական գիտակցության պատկերի զարգացման առանձնահատկությունները: Լեզվախոսքային գործունեության գործառույթների և նշանակության կառուցվածքի հարցերը դիտարկելիս անհրաժեշտ է առավել մանրամասն անդրադառնալ «նշանակություն-իմաստ» փոխհարաբերություններին:

Բառիմաստի չափման առաջին փորձերն արվել են Զ. Օսգուրի կողմից (խոսքը իմաստային տարբերակիչի սկզբունքի մասին է): Դրանց հաջորդել են լեզվական նշանի կաղապարման փորձերը՝ պատկերի և հասկացական ձևերի հարաբերությունների հաստատման միջոցով, որոնք կախված են ազգամշակութային, տարիքային և այլ գործոններից: Այսօր իմաստաբանությունը վերածվել է տարբեր գիտությունների կարևոր հայեցակերպերից մեկի, որն իր ազդեցությունն ունի լեզվաբանության մեջ՝ նշանակության տեսության մշակման գործում: Ընդհանուր, տրամաբանական և լեզվաբանական իմաստաբանությունները կապված են միմյանց հետ գիտակցության և նյութական ոլորտների վերաբերությամբ: Ընդհանուր իմաստաբանությունը ճանաչողական տեսության բաժիններից է, որն ուսումնասիրում է լեզվի և գիտակցության հարաբերությունները: Իմաստաբանության հայեցակարգերը նաև փիլիսոփայական բնույթ ունեն, որի մասին տեղեկանում ենք լեզվի Վ. Հումբոլդտի ուսմունքից, Հ. Շտայնթալի ազգային հոգեբանությունից, Սեպիր-Ուորֆի հարաբերականության տեսությունից և այլ աշխատություններից: Բառի իմաստային դաշտին վերաբերող տեսություններում նշանակությունը հաճախ մեկնաբանվում է որպես հարացուցիչ կամ շարակարգի բաղադրիչների հարաբերություն: Հարացուցների ուսումնասիրությունն առավել հստակ տարվել է Տրիր-Վայսգերբերի իմաստային դաշտերի տեսության մեջ: Դրա համաձայն՝ առանձին բառերի նշանակությունը կախված է դրա «հասկացական հարևանների» հետ, այլ կերպ ասած, իմաստային հարացուցիչ մյուս անդամներից: Այս մոտեցումն ավելի հստակ իր ձևակերպումն է ստանում Լ. Վայսգերբերի աշխատության մեջ, որում ասվում է. «Առանձին անդամի նշանակությունը կապվում է ամբողջի կառուցվածքային օրինաչափությունների հետ»: Ոչ թե ամբողջն է կազմվում առանձին ինքնուրույն մասերից, այլ նշանակությունն է առանձնանում դրանից և պայմանավորվելով դրանով ու դառնալով դրա անդամը՝ հասկացվում»: Այս փոխկապակցվածությունը Լ. Վայսգերբերը «դաշտի օրենք» է կոչում: Շարակարգայնությունն իր արտացոլումն է ստանում նախադասության մեջ բառերի «ինքնուրույնության անհնարին լինելու թեզում»: Վերջինի համաձայն՝ բառի նշանակությունը պայմանավորված է նախադասության իմաստով /տե՛ս Վասիլև, 1990: 65/:

Հաճախ նշանակության էության և նրա գործառույթների քննումը սահմանափակվում է բառի առարկայական վերաբերությամբ և առարկայական բովանդակությամբ: Այսպիսի մոտեցումը ենթադրում է, որ օբյեկտիվ է միայն այն, ինչ հարաբերության մեջ է մտնում առարկայական աշխարհի հետ: Այնուամենայնիվ, նշանակության էությունը սերտորեն կապված է մարդու գիտակցության և ընդհանուր գործունեության հետ: Գիտնականներից շատերը (Վ. Զվեգինցև, Ա. ՈՒֆիմցևա, Ի. Սրեռնին) փորձում են համակցել վերը նշված տեսությունները: Նրանք նշանակության հասկացության մեջ են մտցնում բառի ու առարկայի, բառի ու հասկացության, բառի ու լեզվական համակարգի հարաբերությունները:

Բառի նշանակությունը յուրաքանչյուր անհատի կողմից հասարակական փորձի յուրացումն է: Այն, ինչ հասկացվում է «բառ» ասելիս, ընդհանուր է տվյալ լեզվով խոսող և հոգեբնախոսական որոշակի զարգացման հասած բոլոր մարդկանց համար: Այսպիսով, ձեռք է բերվում մի այնպիսի գործիք (բառը), որով «գծագրվում է» մեր գիտելիքը շրջապատող իրականության մասին: Համակարգված գիտելիքի մեջ են մտնում կենցաղայինը և գիտականը: Անձնային իմաստները հաճախ չեն համընկնում համակարգվածին, դրանք կամ դրանցից ավել, կամ պակաս են: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ համակարգված նշանակությունը հանդես է գալիս որպես նշանակության նկարագրման միջոց, որպես վերացականություն՝ անջատված լինելով լեզվական գիտելիքներից: Սակայն հարկ է ավելացնել, որ բառարանը ներկայացնում է համակարգված նշանակության միայն մի մասը, քանի որ լեզվակիրների իրական լեզվական կարողությունը սովորաբար ավելի զարգացած է: Այս նկատառմամբ հարկավոր է վեր հանել և նկարագրել իրական նշանակությունները՝ դրանք առավելագույն մոտեցնելով լեզվակրի հնարավոր կարողություններին: Լեզվակրի հոգեկանի մեջ առկա նշանակությունների մեջ իմաստաբանի ճիշտ կողմնորոշման անհրաժեշտության և կարևորության մասին խոսել է Յ. Կարառովը՝ նշելով, որ «իմաստային բաղդրիչների ընտրությունը և մեկնաբանումը չպետք է անցնի միջին լեզվակրի ընկալման մակարդակը»:

Բառի նշանակությունն արտացոլում է բառի ճանաչման այնպիսի աստիճանը, որը հատուկ է հասարակական գիտակցությանը տվյալ փուլում: Լեզվաբանն ուսումնասիրում և նկարագրում է բառի նշանակությունը որպես առարկայի մասին հասարակայնորեն ձեռք բերված գիտելիք: Բառն իր իմաստի մեջ պարունակում է հասարակության զարգացման տվյալ փուլում ձեռք բերված գիտելիքը: Ըստ հոգեբանների, աշխարհի մասին գիտելիքը չի տարբերվում բառային նշանակությունից: Բառը ոչ միայն նշանակում է առարկան, այլև վերլուծում այն՝ փոխանցելով սերունդների պատմական զարգացման ընթացքում ձևավորված փորձը:

Աշխարհի մասին մարդու լեզվական գիտելիքը հակադրվում է ոչ լեզվականին, այսինքն՝ այն գիտելիքին, որն առկա է գիտակցության մեջ զգայական-պատկերավոր ծևով:

Անհատական գիտակցության մեջ յուրացվող նշանակություններն ամբողջական են դարձնում իրականության զգայական տպավորությունները, որոնցում ամբողջանում են գործունեությունը և մոտիվների ու պահանջմունքների բավարարման կամ չբավարարման զգայական վերաբրումները: «Իմաստ» և «նշանակություն» հասկացությունները գիտակցության մեջ բաղի գրանցման աստիճանով են պայմանավորված: Նշանակության և իմաստի հակադրումը, որը լեզվաբանության մեջ իր պատմությունն ունի, հոգելեզվաբանության մեջ նույնպես ոչ շատ միանշանակ է բացատրվում: Այնուամենայնիվ, այստեղ հնարավոր է դառնում ուրվագծել այն ընդհանուր ուղղվածությունը, որը կապված է խոսողի անձնային իմաստների սահմանման և, որն ավելի կարևոր է, խոսքի ծևավորման ընթացքում դրանց որոշիչ դերի հաշվառման հետ: Այս առումով, համաձայնելով Ա. Լեռնտևի հետ, պետք է նշել, որ բարիմաստը նշանակության համանմանակն է, քանի որ երկուսն էլ արտացոլում են իմաստային ոլորտ, և նրանց կենտրոնում նրանց առաջացնող ու կրող՝ խոսքային անհատն է:

Մարդու և բնության փոխհարաբերություններում նշանակությունը հանդես է գալիս որպես գիտակցության հոգեբանական միավոր: Այսպիսով, գոյություն ունեն նշանակության երկու հիմնական մակարդակներ. զգայական ընկալումների և կարգային կառուցների նշանակությունները, որոնք հայտնի են «լեզվական նշանակություն» անվամբ: Այս համակարգի բովանդակությունը համապատասխանում է ազգամշակութային առանձնահատկություններին: Վերջիններս արտահայտում են ստանում ազատ բառազուգորդումներում՝ լեզվակրի գիտակցության բաղադրիչը լինելով: Լեզվակիրների գիտակցությունը նրանց կենսագործունեության և աշխարհընկալման արտացոլումն է: Լեզվական նշանների գործածումը մեծ ազդեցություն է թողնում մարդու լեզվունակության հոգեբնախոսական զարգացման վրա: Նշանակություն-իմաստ զուգում նշանակությունը հանդես է գալիս որպես նշանի կառուցվածքային գործառույթ, իսկ իմաստը՝ իրադրությամբ պայմանավորված ընկալում: Այս կամ այն հանրամշակութային լեզվակրի տեսակյունից միևնույն բաղադրիչը կարող է դիտարկվել և՝ որպես նշանակության մաս, և՝ իմաստային առանձնահատկություն:

Գիտակցության մեջ հասկացությունների և կարգերի գործածության ու գնահատման ծևերը, բարիմաստի ազգամշակութային առանձնահատկությունները, ինչպես վերը նշվեց, երևան են գալիս զուգորդային կապերում: Մարդու հոգեկանում զուգորդվում են զգայությունները, մտա-

պատկերները, իմաստներն ու հասկացությունները: Գիտակցության գործունեության ոլորտում զուգորդումներն իրենց դերով նշանակությունից հետո երկրորդ տեղն են զբաղեցնում: Զուգորդումները գործառական այն կապերն են, որոնք ապահովում են հոգեկան ձևերի տեղաշարժերը, կուտակումները, բաշխումներն ու կերպարափոխումները: Անմիջական զգայություններն իրենց արտացոլումն են ստանում նշանային համակարգի միջոցով, քանի որ զուգորդումները մտքի ընթացքն ապահովող տարրական գործողություններն են: Զուգորդային կապերը կազմակերպում, կարգավորում են գիտակցության բազմաբնույթ գործունեությունը: Գիտակցության ոլորտ ընկած ամեն մի նոր բառ (նշանակություն) իր տեղն է գտնում գիտակցության մեջ ամրակայված զուգորդումների ցանցում: Նշանակության լրացված, ամբողջականացված լինելը կախված է զուգորդումների թվից: Զուգորդումները կայանում են զուգորդվող կողմերի մեկ կամ մի խումբ հատկանիշների նմանության կամ նույնության հիմքով: Զուգորդման մտածական օրինաչափությունների առաջին գիտական դասակարգումները կատարվել են 18-րդ դարում Հարտլիի և Պրիստլիի կողմից առաջ քաշված ասցիանիզմի հայեցակարգում /Pristley, 1775: 166/: Վերջինիս գաղափարները հետագայում իրենց զարգացումն ապրեցին իմացարանական կիրառական և տեսական բնույթի խնդիրների լուծման ճանապարհին: Մտածական տարրերի ժամանակակից ճանաչողական գիտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ տարրերվում են իրադրական և կարգային պատճառականություն ունեցող զուգորդումներ կամ կապակցումներ: Իրադրական զուգորդումները, ի տարրերություն կարգայինների, երկու փուլով են իրականանում. ընդհանուր հատկանիշի բացահայտում ու իրադրության առանձնահատկության վերացարկում:

Զուգորդումների մեխանիզմների կայացման շնորհիվ «հին գիտելիքը» ճանապարհ է բացում նոր հասկացության ստեղծման համար: Հասկացությունները զուգորդելիս կարող ենք հենվել դրանց բառահնչյունական կազմության, օրգանական ծագման կամ որևէ անհատական որակի վրա (գույն, միջավայր և այլն): Որակական այս առանձնահատկությունները կարող են վերածվել նշանակության: Կախված նրանից, թե ինչ աստիճանի է հասել հասկացության յուրացումը տվյալ լեզվական գիտակցության կողմից, կամ ինչպիսին է հասկացության կարգային կառուցվածքը, ինչ իրադրական միջավայրում է այն յուրացվել, որա կազմած զուգորդումները կարող են լինել լեզվական և արտալեզվական: Արտալեզվական զուգորդումներն արտահայտվում են ժողովրդական բանահյուսության, արվեստի և մշակույթի մեջ՝ ներկայացնելով ազգի և անհատի հոգեբանությունը: Լեզվական զուգորդումներն առանձնանում են ձևաբանական, հնչյունային, գործառական կամ հաս-

կացական լինելով: Հետևաբար, բարի յուրացումը սերտորեն կապված է լեզվական գիտակցությունը ծևավորող օնթոգենետիկ և ֆիլոգենետիկ գործոնների ամբողջության հետ: Չուզորդական կապերը որպես լեզվական նշանի հոգեբանական ներուղղման և իմաստավորման մեխանիզմ դիտելը տրամաբանորեն հանգեցնում է իմաստի էության բացահայտմանը: Յուրաքանչյուր նոր նշանակություն, ընկնելով գիտակցության ոլորտ, իր տեղն է գտնում զուգորդային «ցանցի» մեջ: Որքան մեծանում է զուգորդումների թիվը, այդքան ավելի ամբողջական է դառնում նշանակությունը: Հետևաբար, նշանակության/իմաստի յուրացման աստիճանը կախված է նաև զուգորդումների թվից: Այսպիսով, զուգորդական կառուցների դերն ու գործառույթը նոր հետազոտական հնարավորություններ է ընձեռում լեզվի յուրացման ուսումնասիրության ոլորտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Pristley J. Hartley's theory of the human mind: on the principle of the association of ideas. London: Printed for J. Johnson, 1775.
2. Выготский Л. С. Собрание сочинений. Москва: Педагогика, 1981-1988.
3. Васильев Л. М. Современная лингвистическая семантика. Москва: Гуманитарные науки, 1990.
4. Гальперин П. Я. Введение в психологию. Москва, 1976.
5. Куликов Л. Психология сознания. СПб.: Питер, 2001.
6. Леонтьев А. А. Деятельность, сознание, личность: учебное пособие. Политиздат, 1975.
7. Леонтьев А. А. Деятельность и сознание. Москва: Политиздат, 1965.
8. Сеченов И. М. Рефлексы головного мозга // Элементы мысли. СПб.: Питер, 2001.
9. Тарасов Е. Ф. Методологические проблемы исследования речевого мышления. Москва: Наука, 1985.
10. Кодухов В. Общее языкознание. Москва: Наука, 1976.

Р. АРАКЕԼՅԱՆ – *Психолингвистические аспекты лингвистического сознания.* – Данная статья посвящена изучению психолингвистических аспектов языкового сознания. Языковое сознание, как и другие его виды, функционирует в индивидуальном сознании как средство верbalного выражения носителей языка. Самой важной функцией языкового сознания является познание и выражение объективной реальности. Употребление и оценка понятий и категорий, а также национально-культурные особенности значения слов

проявляются в ассоциативных связях, существующих в сфере сознания. Вышесказанное позволяет сделать вывод о том, что изучение языкового сознания необходимо начать с исследования внутренней структуры сознания.

Ключевые слова: языковое сознание, коммуникация, речевая деятельность, категориальные структуры, мышление, ассоциативные связи, значение

R. ARAKELYAN – *The Psycholinguistic Aspects of Linguistic Consciousness.*

– The paper deals with the study of psycholinguistic aspects of linguistic consciousness, which is a means of speakers' verbal expression. The most significant function of linguistic consciousness is the cognition and reflection of objective reality. The estimation of concepts and the use of categorial constructions are vividly expressed in associative links. This is the reason why we need to study the structure of consciousness before expanding on the nature of linguistic consciousness.

Key words: linguistic consciousness, communication, speech activity, categorial structures, mentality, associative links, meaning

Received: 28.03.2022

Revised: 18.04.2022

Accepted: 17.06.2022

Աննա ԿՆՅԱԶՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սույն հոդվածում քննարկվում է անեկդոտի ժանրը, քանի որ այն հայուսկ հեղաքրքրություն է ներկայացնում լեզվաբանության համար որպես հաղորդակցական վարքի նմուշ-օրինակի հեղազորության առանձնահատուկ աղյուս, որը թույլ է բավիս վեր հանել հանրամշակութային զանազան կարծրապիտիք: Անեկդոտները բանահյուսական կայուն կառուցվածքներ են. դրանք արդացողում են հավանության արժանացած վարքի, ակնկալելի ձևերը՝ հնարավորություն ընձեռելով հումորի լոյսի ներքո դեսնելու որոշակի դիրքորոշումներ: Հումորն այս կամ այն ձևով գոյություն ունի ցանկացած մարդու, կոլեկտիվի, երկրի, ազգի կյանքում. այն մարդկանց հաղորդակցության միջոց է, որը հնարավորություն է ընձեռում քննարկելու սոցիալ-հոգեբանական լուրջ հիմնախնդիրներ: Վերլուծության արդյունքները թույլ են բավիս փաստել, որ անեկդոտներում արդացոլվում է աշխարհի յուրահատուկ ազգային պարկերը, և անեկդոտը կարելի է դիրքարկել որպես միջանձնային հաղորդակցության միջոցներից մեկը:

Բանալի բառեր. Երգիծական խոսույթ, անեկդոտ, ժանր, հումոր, կոմիկական, կարծրապիտ, «կենցաղային» անեկդոտ

Երգիծական խոսույթը դիտարկվում է որպես հաղորդակցային բարդ երևույթ, որը պատկերացում է տալիս հաղորդակցության մասնակիցների և նրանց բնութագրերի վերաբերյալ: Այն բնութագրվում է իրականության նկատմամբ առանձնահատուկ երգիծական վերաբերմունքով:¹

Երգիծական խոսույթի հիմնական ժանրը «կատակաբանություն» է: Սովորաբար երգիծական հաղորդագրություն ուղարկողն ակնկալում է, որ խոսակիցը կճանաչի տվյալ խոսքային ժանրը, կառանձնացնի ակնկալվող տեղեկատվությունը և իր ըմբռնումը կդրսնորի ծիծաղով ու ժպիտով: Կոմիկականի, հետևաբար և հումորի հիմնական հատկանիշը ծիծաղն է, որը բնածին արծագանք է և իր հուզական երանգավորմամբ և առաջացման պատճառներով՝ բավականին բազմազան: Տեքստը հասկանալու համար հասցեատերը պետք է ծանոթ լինի այդ ժանրին: Ազնիայտ է, որ կատակը հազիվ թե համապատասխան ձևով ընկալվի ու

հասկացվի, եթե հասցեատերը պատկերացում չունի հասարակական կարծրատիպերի և տվյալ ժողովրդի մշակույթում ամրակայված ավանդույթների փոխադարձ սերտ կապի մասին:

Մարդիկ գիտեն հասարակական կարծրատիպերի, ավանդույթների փոխադարձ կապի մասին, որոնցից բխում է կատակը, և առանց որոնց այն չի ընկալվի /տե՛ս Ռուբեն Շմելևա, Ռուբեն Շմելև, 1998/:

Հումորը, համարվելով խմբային նույնականացման միջոց, թույլ է տալիս կրճատել սոցիալական հեռավորությունը: Այն հաղորդակցության մասնակիցների կողմից իրականացվում է՝ համընդհանուր արժեքներին, կարծրատիպերին դիմելու հաշվին: Հումորն արտացոլում է մշակութային արժեքներ, կարծրատիպեր և նպաստում է ներխմբային համախմբվածությանը: Հումորի ընկալումը կախված է երեք գործոններից՝ հաղորդակցական իրավիճակից, հաղորդագրություն ուղարկողից և այն ստացողից:

Յու. Վ. Շչուրինան, դիտարկելով երգիծական խոսքային ժանրերը, նրանց մեջ առանձնացնում է կարակը, անեկդոտը շվիման կենցաղային մակարդակում, երգիծական ասացվածքը, երկխոսական մանրապատումը, մակագիրը (Էպիգրամը) /Շպիրինա, 1999: 151/:² Յուրաքանչյուր կատակ և անեկդոտ հումորի, հեգնանքի կամ երգիծանքի ուղղվածություն ունի, սակայն, ի տարբերություն կատակի, հումորի, հեգնանքի և երգիծանքի, որոնք ասես ցրված են ամբողջ տեքստում, անեկդոտը ստեղծագործության կառուցվածքում պահպանում է ինքնուրույնությունը: Ավելին՝ անեկդոտը սահմանափակ ծավալով ամբողջական տեքստ (կամ տեքստի ինքնուրույն տարր) է՝ կոմիկական բովանդակությամբ /Санников, 1999: 23/:³ Կատակը ծնունդ է առնում համատեքստից, իսկ անեկդոտն ինքն է ստեղծում համատեքստ: Հետևաբար ո՞չ բովանդակությունը, ո՞չ սյումեն, ո՞չ ուղղակի կամ քողարկված իմաստը չեն բնորոշում անեկդոտը որպես կոմիկականի հատուկ ծև, այլ պատասխան ռեակցիա, որը որոշվում է, առաջին հերթին, անեկդոտ պատմելու գործընթացի ներփակ լինելու ամբողջ համատեքստով:

Անեկդոտի նախապատմությունը հասնում է եվրոպական մշակույթի, բյուզանդական պատմության խորքերը, որտեղից էլ ծագել է այդ բառը՝ հունարեն “*anecdotos*” (άνεκδοτον)՝ չըրպված, չհրարարակված, հասարակությանն անհայտ սկեղծագործություն, որն առաջին անգամ կիրառվել է լուս ընծայված հնագույն ձեռագրերի առնչությամբ /Պելտցեր, 1899/:⁴ Հետագայում անեկդոտը սկսեց նշանակել հեղինակների, առավելապես պատմաբանների կողմից չհիշատակված որևէ բնութագրական փաստ, դեպք: Կամենալով միմյանց զարմացնել իրենց քաջատեղյակությամբ՝ պատմաբանները ճոխացնում էին իրենց աշխատությունները տարբեր մանրամասներով, որոնք ոչ միայն ոչ մի առնչություն չունեին պատմու-

թյան հետ, այլև հաճախ երևակայության ոլորտից էին: Պատմական մանրամասներին համահավասար այդ եզրույթի ներքո սկսեցին ենթադրվել առհասարակ քիչ թե շատ հետաքրքիր առանձին փաստեր, գլխավորապես սրամիտ պատմություններ, որոնք ապշեցնում էին իրենց անսպասելիությամբ և թեթևությամբ: Անգլիական լեզվամշակույթում համանման հասկացությունը բնութագրվում է *joke*, *canned joke*, *funny story* բառամիավորներով: Գոյություն ունեն մի քանի հատուկ եզրույթներ, որոնք բնորոշում են “*joke*”-ի տարբեր տեսակները՝ *numskull tale*, *ethnic slurs*:⁵ Հայերենում բոլորն էլ (anecdote, joke, canned joke, funny story, numskull tale, ethnic slurs) կոչվում են անեկդոտ, որը նշանակում է կարճ, զվարճալի, սրամիտ պատմություն ծիծաղաշարժ կամ արտասովոր դեպքի մասին /Աղայան, 1976/: Ժամանակակից անեկդոտները պատմականորեն ծնունդ են առել նշանավոր և մեծ մարդկանց կյանքի ծիծաղաշարժ պատմություններից: Անեկդոտն իր հերոսներին անդադար հավասարեցնում է սովորական մարդկանց և զրկում նրանց վեհությունից:

Մի կողմից անեկդոտը պարզ, հաճախ նույնիսկ պարզունակ թվացող կարճ պատմություն է առօրյա կյանքի մասին, մյուս կողմից՝ աշխարհի առաջատար մարդաբանների, փիլիսոփաների, բանասերների և հոգեբանների մանրակրկիտ հետազոտությունների առարկա: Ժամանակակից անեկդոտները ներկայանում են որպես բազմակողմանի երևույթներ, որոնք լեզվաբանական, գրականագիտական, սոցիոլոգիական, մշակութաբանական, հոգեբանական և պատմաբաղաքական վերլուծությունների առարկա են դառնում /Տերյ, 1978; Դրյուժինին, Սավченко, 1996; Կարասիկ, 1997; Շմելեվա, Շմելև, 2003/: Անեկդոտը ժանր է, որն առանձնակի կարևորություն ունի լեզվամշակույթն ուսումնասիրողների համար: Դրա առանձնահատկությունը պայմանավորված է երկու հանգամանքով: Սուածին՝ անեկդոտը գտնվում է խոսքային և գրական ժանրերի սահմանագծում, այսինքն՝ լինելով բանահյուսական ժանր՝ այն ոչ թե արհեստավարժ ստեղծագործողների, այլ շարքային մշակութակիրների հավաքական փորձն է: Երկրորդ՝ անեկդոտի տեքստերում իրացված աշխարհի պատկերին հատուկ է համընդհանրությունը, քանի որ անեկդոտն արտացոլում է հասարակության կեցության նշանակալի բոլոր կողմերը՝ կյանքը, մահը, առողջությունը և այլն:

Ի տարբերություն գրական անեկդոտի՝ «կենցաղային» անեկդոտը բացառապես խոսքային (այլ ոչ թե գրական) ժանր է: Պետք է տարանցատել անեկդոտ պատմելը՝ որպես բանավոր խոսքային երևույթ, և անեկդոտի տեքստը՝ այն, ինչ վերարտադրվում է տվյալ խոսքային ժանրը իրացնելիս: Եթե մարդը անեկդոտ է պատմում, ենթադրվում է, որ ինքն է հորինել այդ կատակը: Իհարկե, կարող է այնպես պատահել, որ մարդը կրկնի ուրիշի անեկդոտը՝ այն ներկայացնելով որպես իրենը:

Մինչդեռ անեկդոտը, եթե նույնիսկ մարդն ինքն է հորինել, նա պետք է պատմի որպես ուրիշներից լսած: Դրանով իսկ անեկդոտը բնութագրվում է վերարտադրելիությամբ. այն անեկդոտ պատմելու խոսքային ժանրում նոր չի ստեղծնվում, այլ վերարտադրվում է /Ռմելևա, Ռմելև, 2002/: Այդ առումով անեկդոտ պատմելը որոշ չափով հիշեցնում է խոսքային այն ժանրերը, որոնցում օգտագործվում են կաղապարային բանաձևեր: Թեև պատմողն անեկդոտը մատուցում է որպես ուրիշներից լսած, նա միաժամանակ հույս ունի, որ այն լսարանին ծանոթ չէ, որ լսողները (ծայրահեղ դեպքում նրանց մի մասը) նախկինում այն չեն լսել: Այս առումով անեկդոտի տեքստը չի կարող դիտվել որպես լեզվակաղապար բառիս բուն իմաստով: Այն բնութագրվում է ոչ միայն վերարտադրելիությամբ, այլև խոսքային հաղորդակցության մասնակիցներին հայտնի լինելով: Եթե անեկդոտը, պարզվում է, ծանոթ է բոլոր լսողներին, ապա կարելի է համարել, որ անեկդոտ պատմելը կայացել է (և այդ իմաստով ժանրը չի խաթարվել), սակայն եղել է «անհաջող» /Ռմելևա, Ռմելև, 1998/: Անեկդոտի տեքստի բազմակի վերարտադրելիությունը, որը նաև թույլ է տալիս որոշ չափով տարբերակային փոփոխություններ անել՝ կախված հասցեատիրոջից կամ հաղորդակցական իրավիճակից, մերձեցնում է անեկդոտը խոսքային այնպիսի ժանրերի, ինչպիսիք են՝ գրական անեկդոտն ու առակը: Սակայն այդ ժանրերը տարբերվում են գործող անձանց կազմով և նրանց ներկայացման ձևերով: Հայտնի քաղաքական գործիչները, մարզիկները և հեռուստահաղորդավարները մշտապես մեջբերում են անեկդոտներ, որը թույլ է տալիս խոսել անեկդոտների միջտեքստային ակտիվ կապի մասին:

Անեկդոտը ժողովրդական բանավոր ստեղծագործության հնագույն ժանր է: Անեկդոտի բնորոշ գծերից է անանուն լինելը, քանի որ երբեմն անեկդոտի հեղինակի անունը պարզվելու դեպքում անգամ, միևնույն է, չի փոխվում ժանրի բնույթը. չէ՞ որ յուրաքանչյուր մարդ դառնում է տվյալ հեղինակի համահեղինակը. նա իրավունք ունի պատմելու այդ անեկդոտը՝ յուրովի՝ փոփոխության ենթարկելով տեքստը: Անեկդոտում հեղինակային ամրագրված տեքստ գոյություն չունի, ինչպես ժողովրդական երգում է կամ հեքիաթում: Սակայն, ինչպես հեքիաթը, անեկդոտը մեծ թվով տարբերակներ ունի: Անեկդոտի և բանահյուսական ձևերի մյուս ընդհանուր գիծն այն է, որ այն խոսքային արվեստի ձևերի ստեղծագործական համադրության պտուղ է, քանի որ պատմողը ոչ միայն դրա խոսքային տեքստի համահեղինակն է, այլև յուրատեսակ դերասան /Կագան, 1996/: Սա թույլ է տալիս անեկդոտը դիտարկել որպես բանահյուսության վերափոխված տեսակ: Գեղագիտական տեսանկյունից անեկդոտը պատկանում է կոմիկականի ոլորտին. դրա գեղարվեստական արժեքը որոշվում է ժպիտ կամ ծիծաղ առաջացնելու կարողությամբ:

Անեկդոտը, ինչպես և ցանկացած տեքստ, որը պատկանում է այս կամ այն ժանրին, օժտված է կառուցվածքով, ձևով ու բովանդակությամբ: Անեկդոտը կարելի է դասել նախադեպային տեքստերի շարքին, քանի որ դրանցում արտացոլվում են ոչ միայն զանազան կարծրատիպեր, այլև աշխարհի ազգային պատկերը: Կարծրատիպային հատկանիշների հարաբերակցությունն էլ հենց անեկդոտի ինքնատիպության վկայությունն է որպես խոսքային շփման ժանր, որպես խոսքի մշակույթի երևույթ:

Անեկդոտը իր ձևերի ողջ առատությամբ ու բազմազանությամբ հանդերձ՝ ունի ժանրի անփոփոխ կառուցվածք, որը թույլ է տալիս այն տարբերել խոսքարվեստի ժանրային մյուս կազմավորումներից, իսկ դրա շրջանակներում՝ լավ անեկդոտը միջակից կամ՝ վատից: Առաջին հերթին՝ դա հակիրճությունն է: Որքան կարճ է անեկդոտը, այնքան ավելի է համապատասխանում ժանրային բնութագրին: Բացի այդ՝ անեկդոտի սյուժետային կառուցվածքը սովորաբար հնարավորինս հստակ է: Այն ենթադրում է ինտրիգի առաջադրում, անկանխատեսելի ավարտով գործողության ծավալում, անսպասելի հանգուցալուծում: Այսպիսով, անեկդոտի տեքստը, ինչպես նախնական բանավոր, այնպես էլ հաջորդող գրավոր ձևով, գրեթե միշտ կառուցվում է երկբաղադրիչ սկզբունքով՝ ունի նախադրություն և հանգուցալուծում, կամ սկիզբ և ավարտ: Սկիզբը լսողին ծանոթացնում է բովանդակությանը, թեմային, ինտրիգին, ստեղծում սպասման լարվածություն: Միևնույն ժամանակ, անեկդոտի հանգուցալուծումը, անկախ ամբողջ տեքստի ծավալից, միշտ պետք է լինի անսպասելի, հաճախ տարօրինակ, որն էլ սովորաբար անեկդոտը դարձնում է ծիծաղելի: Այսպիսով՝ անեկդոտի ժանրային էությունը հանգեցնում է կարճ պատումի անսպասելի սրամիտ ավարտին: Պատումն ինքը կարող է ունենալ ցանկացած խոսքային կառուցվածք: Սակայն իրագործվում է որպես սրամիտ խաղ: Անեկդոտի էությունը կարելի է հանգեցնել համատեքստի անսպասելի փոխարինմանը, որը ոչ խոսքային իրավիճակի լարվածությունը հանում է խոսքային եղանակով:

Էսպես կարևոր է նաև անեկդոտի ժանրային սահմանների որոշարկումը: Ակներևն է, որ անեկդոտը կարող է ծնունդ առնել ցանկացած բանահյուսական-գրական ժանրից կամ, ընդհակառակը, փոխակերպվել գեղարվեստական ցանկացած ժանրի, որում կոմիկականի էական տարր է բառախաղը կամ իրադրային խաղը: Այլ կերպ ասած՝ անեկդոտը կարող է կիրառել ցանկացած ժանրային ձև՝ դրա հետ մեկտեղ մնալով անեկդոտ: Հատկապես դժվար է հասկանալ, թե անեկդոտի բանահյուսական ժանրերը ինչպես են գոյատևում ժամանակակից զանգվածային հասարակության պարագայում և համագործակցում արվեստի, քաղաքականության, գաղափարախոսության, առօրեականության հետ: Կյան-

քի ու անեկդոտի միջև տարբերությունն ահռելի է, և դրանք իրար խառնելն անհնարին է: Թերևս այդ է պատճառը, որ այն ընկալվում է որպես նորմից շեղում: Որքան մեծ է անեկդոտի և կյանքի միջև եղած տարբերությունը, այնքան ավելի հավանական է, որ անեկդոտը կապրի և կզարգանա /Կարասիկ, 2002/: Անեկդոտը նման է ոչինչ չպարտավիրեցնող կատակին և բառախաղին, որոնց նշանակությունը (առերևույթ) գուտ գեղագիտական է. ցրել առօրյա տաղտկալի միօրինակությունը կյանքի անսովոր ինչ-որ մանրամասների սրամիտ նկարագրությունով: Ստեղծագործության այս ձևերում կարևոր է նաև այն, որ հեղինակի ինքնությունն այստեղ էական չէ, այն ասես պարտադիր չէ, քանի որ ի սկզբանե անեկդոտի կամ կատակի ժանրը իր նկատմամբ լուրջ վերաբերմունք չի ենթադրում: Այն էական նշանակություն չունի, այն հպանցիկ անշահախնդիր զվարճախաղ է, որը ոչ մի նպատակ չի հետապնդում, որպես պարզ բավական է նույնիսկ թեթև ժպիտը /Ռմելեա, Ռմելեա, 2002/:

Անշուշտ, անեկդոտներից շատերը կարող են ունենալ հասարակության լայն խավերի համընդհանուր հասցեատեր, սակայն կան նաև անեկդոտներ, որոնք նախատեսված են որոշակի լսողի համար:

Հաշվի առնելով անեկդոտների թեմատիկան՝ դրանք կարելի է հանդիպադրել «արսուրդային և իրական» հատկանիշներով:⁶ Արսուրդայինը՝ այսինքն՝ անհեթեթը, անմիտը, հատուկ իրավիճակի հատկանիշ է, երբ ինչ-որ բան հակասում է առողջ բանականությանը, կենսափորձին, տրամաբանությանը, սակայն, դրանով հանդերձ՝ համարվում է հավանական կամ իրականում գոյություն ունեցող: Կոմիկական անհեթեթության յուրահատկությունն այն է, որ չնայած իրավիճակի անհեթեթությանը, այն չի «դիպչում» հասցեատիրոջը:

Անեկդոտը կարող է լինել հաջող կամ անհաջող, և դա մեծապես պայմանավորված է մեկնաբանողի ճաշակով ու արվեստով: Անեկդոտը չի միջամտում իրադարձությունների իրական ընթացքին, թեև խաղարկում է դրանք առանձին դրվագներով: Անեկդոտը ներքաշում է կյանքի խառնաշփոթ կողմերը, որոնք առաջանում են դրա բնական ընթացքի խաթարման հետևանքով: Այն ի ցոյց է դնում ամենքին անսովոր մի դրվագ՝ առաջարկելով դա համարել սովորական: Այսինքն՝ անեկդոտը մեր իսկ հարաբերությունների, հակումների և թերությունների, մեր ամբողջ խայտաբղետ ու բազմազան կյանքի, կարծրատիպերի արտացոլումն է /Саников, 1999/:

Բոլոր անեկդոտները կարելի է դասակարգել տարբեր չափորոշիչների հիման վրա՝ առավել հաճախադեպ հատկանիշներն են թեմատիկան և աղբյուրը: Առանձնացվում են կենցաղային, քաղաքական, առողջապահական, բանակային, թատերական անեկդոտներ, հարբեցողների, անհավատարիմ ամուսինների, տարբեր ազգությունների և սոցիալական

խմբերի ներկայացուցիչների մասին անեկդոտներ:

«Կենցաղային» անեկդոտները գոյատևում են տասնամյակներ, հարյուրամյակներ, անգամ հազարամյակներ շարունակ և մի ժողովրդից փոխանցվում են մյուսին: Հին և նոր, կենսունակ, հավերժափոփոխ և նորացվող անեկդոտներ հավաքելը երեք չի կարող ավարտված համարվել: «Կենցաղային» անեկդոտը դիտարկում է փաստերը, կարծրատիպերը առօրյա կյանքի կտրվածքով, որտեղ ամեն ինչ անդադար փոփոխվում է: Անեկդոտը փաստերն արժեքների չի վերածում, քանի որ այն պատմում են միայն ծիծաղեցնելու համար: Անեկդոտի գլխավոր խնդիրը ծիծաղն է և պատճառած առանձնահատուկ հաճույքը և ոչ թե նրա ճշմարիտ լինելը: Անեկդոտի համար ծիծաղը գրավական է, որը հաստատում է նրա հետագա կյանքի իրավունքը:

«Կենցաղային» անեկդոտներում ծաղրի են ենթարկվում մարդկային թուլություններ՝ հիմարությունը, ժլատությունը, սնափառությունը, զվարճակի ձևով են ներկայացվում ընտանեկան բախումները և մարդկային հարաբերությունները: Անեկդոտի արտահայտչածներն անսահմանորեն բազմազան են: Դա կարող է լինել մեկ արտահայտություն, կարող է լինել երլխոսություն, հարց ու պատասխան, սակայն հաճախ դա բառախաղ է:

Այսպիսով՝ անեկդոտը ոչ միայն երգիծական տեքստ է, այլև ժանրային նախադեպային տեքստ, որն ունի յուրօրինակ կառուցվածք և երգիծական տպավորության իրացման զանազան ձևեր: Անեկդոտները տեքստեր են, որոնք խտացնում են հանրամշակութային կարծրատիպերը և կենցաղային գնահատողականությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գոյություն ունեն երգիծական խոսույթի բնութագրական հետևյալ հատկանիշները.

- արդիական հասկացույթները մեջ ձևով վերահմաստավորելու և տարածությունը կրճատելու ձգտումը,
- ծիծաղարժ վարքի որոշակի ձևանմուշների առկայությունը, որոնք ընդունված են տվյալ լեզվամշակույթում,
- շիման մասնակիցների՝ լուրջ զրույցից խուսափելու հաղորդակցային մտադրությունը /Կարասիկ, 2002: 25/:

2. Դ. Բոբսերն ու Ֆ. Կորտես-Կոնդեն առանձնացնում են կենցաղային հումորի երեք տեսակ՝ *teasing, joking about an absent other, self-denigrating joking* /Boxer, Cortes-Conde, 1997/:

3. Անեկդոտի՝ որպես մշակութային բացարիկ երևույթի առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալները.

- անեկդոտը շատ տարողունակ ծևով արտացոլում է իր էությունը, որի շնորհիվ էլ չի պահանջում իմացական մեծ լարվածություն,
- անեկդոտը (մասնավորապես գենդերային թեմատիկայով) ներկայացվում է խոսակցական, կենցաղային լեզվով, որի շնորհիվ հասկանալի է դառնում տարբեր սոցիալական խավերի և խմբերի համար,
- անեկդոտի շնորհիվ ծիծառի առարկան պարզեցվում է, դառնում ավելի հասկանալի, մատչելի, բացատրելի, որը մի կողմից վերացնում է լարվածությունը առարկայի նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ անկասկած ամրապնդում գոյություն ունեցող կարծրատիպը,
- անեկդոտն առաջ է բերում հաճելի հուզական արձագանք՝ ծիծառ, որով էլ բացատրվում է դրա գոյության երկարատևությունը,
- անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից, սեռական պատկանելությունից՝ յուրաքանչյուր մարդ իր և հակառակ սեռի հարաբերություններում այսպես թե այնպես ներգրավված է, հետևաբար տղամարդկանց և կանանց կենսագործունեության տարբեր կողմերի մասին անեկդոտները նրա համար արդիական կմնան:

4. XX դարի ընթացքում ի հայտ եկան «**անեկդոտ»** եզրույթի տարբեր ընկալումներ: Համաձայն պարզ ծևերի հանրագիտարանի՝ անեկդոտը “*anecdote*” կարծ, հաճախ բարոյախրատական պատմություն է նշանավոր մարդկանց մասին և ներկայացնում է անեկդոտի հերոսին որպես որոշակի հանրային խմբի կամ ժամանակաշրջանի ներկայացուցիչ /Koch, 1994: 123-131/: Իսկ ըստ գրականագիտական համառոտ հանրագիտարանի՝ անեկդոտ ասելով ենթադրվում է բազմաբովանդակ բանավոր ոչ մեծ կատակապատում՝ անսպասելի ու սրամիտ վերջաբանով /Краткая литературоведческая энциклопедия, 1962-1978/: Անեկդոտը նաև սահմանում են որպես անսպասելի սրամիտ վերջաբանով պատմություն, որտեղ մշտապես գործող անձինք բոլոր լեզվակիրներին քաջածանոթ կերպարներ են /Шмелева, Шмелев, 2003: 23-30/:

5. “**Numskull tale**” եզրույթը համապատասխանում է ճանապարհորդների մասին պատմություններին: Անգլալեզու գրականության մեջ այն նաև հաճախ կիրառվում է «ազգային» անեկդոտները հետազոտելիս, այսպես օրինակ՝ լեհերը ամերիկյան անեկդոտներում: Իսկ “**ethnic slurs**” հոմանիշ եզրույթով նշվում են ինչպես տվյալ մշակութային խմբում գոյություն ունեցող կարծրատիպերը, որոնց քաջածանոթ են մշակութային այդ խմբի բոլոր անդամները, այնպես էլ տեքստերը, որոնցում այդ կարծրատիպերը կիրառվում են, ինչպես օրինակ՝ ամերիկացիների պատկերացումներում լեհերը կեղտոտ և հիմար ազգ են /Санников, 1999: 427/:

6. Անեկդոտները կարող են նաև դասակարգվել. 1) ըստ խեղկատակային, կատակային, կիսալուրջ տոնայնության հատկանիշների հա-

րաբերակցության, 2) ըստ բարեկամասիրական, բարեհաճ, անբարեհաճ, թշնամական վերաբերմունքի հատկանիշների հարաբերակցության, 3) ըստ անեկդոտի հիմքում ընկած հիմնախնդրային իրավիճակի բնույթի, 4) ըստ անեկդոտի գլխավոր գործող անձի նկատմամբ պատմողի և լսողի վերաբերմունքի, 5) ըստ խոսույթի մասնակիցների սոցիալական տիպի, որին ուղղված է տվյալ անեկդոտը /Կարասիկ, 1997/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Boxer D., Cortes-Conde F. From Bonding to Biting: Conversational Joking and Identity Display // *Journal of Pragmatics*. New York: John Wiley & Sons, 1997, № 27.
3. Koch W. A. Simple Forms: an encyclopaedia of simple text-types in lore and literature. Bochum: Universitätsverlag Dr. Norbert Brockmeyer, 1994.
4. Дружинин В.Н., Савченко И.А. Анекдот как зеркало русской семьи // *Психологическое обозрение*. М., 1996, № 1 (2).
5. Краткая литературная энциклопедия /Гл. ред. А. А. Сурков/. В 9 т. М.: Сов. энцикл., 1962 - 1978.
6. Карасик В.И. Культурные доминанты в языке // *Языковая личность: культурные концепты*. Волгоград – Архангельск, 1996.
7. Карасик В.И. Языковой круг: личность, концепты, дискурс. Волгоград: Перемена, 2002.
8. Карасик В.И. Анекдот как предмет лингвистического изучения // *Жанры речи*. Саратов: Изд-во ГосУНЦ “Колледж”, 1997.
9. Пельтицер А. П. Происхождение анекдотов // Сб. Харьк. ист.-фил. об-ва, т.11. Харьков, 1899.
10. Санников В.З. Русский язык в зеркале языковой игры. М.: Языки русской культуры, 1999.
11. Терц А. Анекдот в анекдоте // *Синтаксис*, № 1. Париж, 1978.
12. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Фоновые знания в русском анекдоте // *Доклады международной конференции “Диалог”*. М., 2003.
13. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Русский анекдот. Текст и речевой жанр. М.: Языки славянской культуры, 2002.
14. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Рассказывание анекдота как жанр современной русской устной речи // *Труды Международного семинара “Диалог 98” по компьютерной лингвистике и ее приложениям*, т. 1. Казань, 1998.
15. Щурина Ю.В. Речевые жанры комического // *Жанры речи*. Саратов: Изд-во ГосУНЦ “Колледж”, 1999, вып. 2.

А. КНЯЗИН – Жанровые особенности юмористического дискурса. – В данной статье рассматривается жанр анекдота, представляющий особый интерес для коммуникативной лингвистики как источник исследования моделей коммуникативного поведения, который позволяет выявить социокультурные стереотипы. Анекдот является не просто юмористическим текстом, но и жанровым прецедентным текстом, обладающим своеобразной структурой и различными способами реализации комического эффекта.

Ключевые слова: юмористический дискурс, анекдот, жанр, юмор, комический, стереотип, «бытовой» анекдот

A. KNYAZYAN – *Genre features of humorous discourse.* – The paper discusses the genre of anecdote, which is of particular interest to communicative linguistics as a special source for the study of models of communicative behaviour, which makes it possible to identify sociocultural stereotypes. An anecdote is not just a humorous text, but also a precedent text with a peculiar structure and various ways of implementing a comic effect.

Key words: humorous discourse, anecdote, genre, humour, comic, stereotype, “everyday” anecdote

Received: 10.03.2022

Revised: 25.04.2022

Accepted: 17.06.2022

Աննա ԿՆՅԱԶՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Վարդուհի ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երևանի պետական բժշկական համալսարան

**ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Սույն հոդվածում քննարկվում են դիվանագիտական գրագրության առանձնահատկությունները: Միջազգային կյանքի կարևոր խնդիրները շոշափող զգալի թվով դիվանագիտական փաստաթղթեր են լայնորեն հրապարակվում, որոնք լուրջ ազդեցություն ունեն համաշխարհային ասպարեզում պետության իմիջի ձևավորման և հերինակության վրա: Դիվանագիտական գրագրությունն իրականացվում է արարողակարգի ավանդական կանոններին համապատասխան, որոնք մշակվել են դարիներով և այժմ ընդունված են միջազգային գործունեության մեջ: Դիվանագիտական հաղորդակցությունը ուղղված է ոչ միայն իրավիճակի օրենսդիր նկարագրմանը, այլև ներգործելուն և համագործակցություն հաստատելուն:

Բանալի բառեր. դիվանագիտական փաստաթղթեր, դիվանագիտական դիսկուրս, անձնական նույա, վերբալ նույա, հուշագիր, հոչակագիր, կոմյունիկե

Դիվանագիտական փաստաթղթերը պետության դիվանագիտական գործունեության առաջնահերթ ձևերից են՝ իր արտաքին քաղաքականության նպատակներն ու խնդիրներն իրականացնելիս: Դիվանագիտական գրագրությունն իրականացվում է արարողակարգի ավանդական կանոններին համապատասխան, որոնք մշակվել են տարիներով և այժմ ընդունված են միջազգային գործունեության մեջ /Wood, 1976/: Դիվանագիտական փաստաթղթերը կարող են նախատեսված լինել սեփական կառավարության կամ մեկ այլ պետության ներկայացուցիչներին փոխանցելու համար: Ուստի դիվանագիտական փաստաթղթերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ներքին և արտաքին: Պետությունների դիվանագիտական փաստաթղթերի զգալի մասը ներգերատեսչական բնույթի փաստաթղթերն են: Փաստաթղթերի մեկ այլ կատեգորիա են նրանք, որոնց միջոցով իրականացվում են պետությունների միջև գրավոր պաշտոնական հաղորդակցությունները, և որոնք արտահայտում են իրենց դիրքորոշումը այս կամ այն հարցի վերաբերյալ /Wilcox, Ault, 1998/:

Այս փաստաթղթերը գրված են «դիվանագիտական լեզվով»՝ այն լեզվով, որով վարչում են պաշտոնական դիվանագիտական հարաբերությունները և կազմվում են միջազգային պայմանագրերը /Stanko, 2001/:

Դիվանագիտական դիսկուրսի համայիր ուսումնասիրությունը, մեր կարծիքով, պահանջում է ավելի լայն և համակողմանի մոտեցում, որը հնարավորության դեպքում ներառում է դիվանագիտական փաստաթղթերի գոյություն ունեցող բոլոր տեսակները: Դիվանագիտական փաստաթղթերը կարելի է միավորել հետևյալ դասերի և ենթադասերի մեջ.

1. պայմանագրեր և միջազգային այլ համաձայնագրեր.

- պայմանագրեր,
- կոնվենցիաներ,
- համաձայնագրեր,
- հոչակագրեր,
- արձանագրություններ:

2. ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների սահմանադրական ակտեր.

- ՄԱԿ-ի խարտիա (կանոնադրություն),
- միջազգային դատարանի կանոնադրություն,
- ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունների սահմանադրություններ:

3. միակողմանի իրավական ակտեր.

- վավերացում,
- պայմանագրին միանալը,
- վերապահում՝ կցված վավերացմանը,
- պայմանագրի խօսում (չեղարկում):

4. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և միջազգային այլ կազմակերպությունների բանաձևեր և հաշվետվություններ.

- բանաձևեր (որոշումներ, հանձնարարականներ, հրահանգներ),
- ընթացակարգի կանոններ,
- հաշվետվություններ:

5. Եղրափակիչ փաստաթղթեր.

ա) միջկառավարական այցերի և բանակցությունների ամփոփիչ փաստաթղթեր.

- կոմյունիկե,
- (համատեղ) հայտարարություններ,
- հոչակագրեր,
- փոխըմբռնման հուշագրեր (հուշագիր համաձայնեցված կետերի վերաբերյալ),

բ) միջազգային կոնֆերանսների եղրափակիչ փաստաթղթեր.

- եղրափակիչ ակտեր,

- հոչակագրեր:
- 6. դիվանագիտական նամակագրություն.
 - ա) ՄԱԿ-ի նամակագրություն.
 - պաշտոնական նամակներ,
 - ոչ պաշտոնական նամակներ,
 - բանավոր նոտաներ,
 - հուշաթերթիկներ / հուշագրեր:
 - բ) միջազետական դիվանագիտական փաստաթղթեր.
 - գ) դիվանագիտական այլ փաստաթղթեր.
- ագրեմաններ,
- հյուպատոսական արտոնագրեր,
- էկզեկվատոր,
- վկայագրեր (հավատարմագրեր, հետկանչի հրամանագրեր);
- լիազորագրեր /Բօրիսենկո, Եվտուշենկո, 2003/:

Այս դասակարգումը թերևս ամենաամբողջականն է, որն առավելագույնս արտացոլում է պետության դիվանագիտական գերատեսչության աշխատանքի տարբեր կողմերը իրենց փաստաթղթային արտահայտությամբ: Հիմք ընդունելով այս տիպաբանությունը՝ մեկ վերապահում անենք, այն, որ, դիվանագիտական ինստիտուտի առանձնահատկություններից ելնելով, դիվանագիտական ոչ բոլոր փաստաթղթերն են հասանելի ուսումնասիրության համար արտաքին հետազոտողին /Morgenthau, 1948; Pozen, 2010/:

Փորձենք ներկայացնել դասակարգման մեր տարբերակը և առանձնացնել դիվանագիտական փաստաթղթերի հետևյալ դասերը.

1. վկայականներ (հավատարմագրեր, հետկանչի հրամանագրեր)
2. նոտաներ (բանավոր, անձնական, շրջանառու, ուղեկցող)
3. կոմյունիկե
4. հուշագրեր, հուշաթերթիկներ
5. դեմարշներ
6. միջազգային պայմանագրեր
7. նամակներ, հեռագրեր (պաշտոնական, անձնական, կիսապաշտոնական, ուղեկցող)
8. ֆաքսեր:

Այս դասակարգումը ներառում է դիվանագիտական փաստաթղթերի հիմնական տեսակները, այն արտացոլում է հիմնական միջազետական ակտերը, որոնք տարբեր երկրների արտաքին գործերի նախարարությունները փոխանակում են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, զարգացնելու, ամրապնդելու կամ դադարեցնելու նպատակով:

Դիվանագիտական տեքստի առումով մեր կարծիքով հավանական հասցեատերերն են.

- համաշխարհային հանրությունը,
- առանձին պետություններ (գործընկերներ կամ «հակառակորդներ»),
- առանձին պաշտոնյաններ, դիվանագիտական ծառայության ներկայացուցիչներ,
- բնակչությունը (դիվանագիտական փաստաթղթերը հյուպատոսական ծառայության աշխատանքում, արտաքին գործերի նախարարության և միջազգային կազմակերպությունների փաստաթղթերը, որոնք հրապարակվել են համացանցում):

Նոյն կերպ կարելի է տարանջատել դիվանագիտական տեքստի հասցեատերերին ըստ քանակական չափանիշի՝ անհատական (դիվանագիտական, այդ թվում ներգերատեսչական նամակագրություն), խմբային (առանձին պետություններ, համաշխարհային հանրություն), զանգվածային (բնակչություն): Բացի այդ, առանձնացվում են հասցեատիրոջն ուղղակի դիմելը և հաղորդակցությունը լրատվամիջոցների (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց) օգտագործմամբ:

Դիվանագիտական դիսկուրսի նպատակն ու ենթանպատակները իրականացվում են տարբեր ժանրերում, որոնք, ըստ հաղորդակցության ձևի, բաժանվում են երկու մեծ խմբի՝ գրավոր և բանավոր: Տեղեկացնելու նպատակն իրականացվում է **գրավոր** այնպիսի ժանրերում, ինչպիսիք են անձնական նույան, պետության կամ կառավարության ղեկավարի անձնական ուղերձը, վերբալ նույան, հուշաթերթիկը, հուշագիրը, պետությունների ղեկավարների, կառավարությունների և արդարին գործերի նախարարների համարեղ հայրարությունը, հոչակագիրը, կոմյունիկեն /United Nations Correspondence Manual, 2000/:

Անձնական նոտան ուղարկվում է կարևոր և սկզբունքային նշանակության հարցերի վերաբերյալ կամ պարունակում է տեղեկատվություն որևէ խոշոր իրադարձության մասին: Վերջին տարիներին լայն տարածում է գտնել դիվանագիտական նամակագրության այնպիսի տեսակ, ինչպիսին է պետության կամ կառավարության ղեկավարի անձնական ուղերձը:

Վերբալ նոտան ներկայումս ամենատարածված փաստաթուղթն է: Արտաքին գործերի նախարարությունները և դեսպանությունները դիվանագիտական նամակագրություն են իրականացնում հիմնականում վերբալ նոտաներ ուղարկելով: Վերբալ նոտաների բովանդակության մեջ շարադրվում են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ բնույթի քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական և այլ խնդիրներ:

Կոլեկտիվ նոտան գրություն է կամ ողջ դիվանագիտական կորպուսի, կամ մի խումբ դեսպանությունների անունից: Դա կարող է դիտվել որպես ճնշում գործադրելու փորձ, ինչը, անկասկած, բացասական արձագանք է առաջացնում:

Բողոքի նոտան մի պետության գրավոր պահանջն է մյուսի դեմ: Այն, որպես կանոն, կազմվում է այն դեպքերում, երբ ենթադրվում է, որ խախտվել են ազգային շահերը կամ ոտնահարվել է որևէ իրավունք ծևավորված պայմանավորվածությունների շրջանակներում:

Կիսապաշտոնական բնույթի **մասնավոր նամակը** (անձնական նամակ) ուղարկվում է ծանոթ անձի կողմից այն դեպքերում, երբ որևէ աջակցություն է պահանջվում պաշտոնական նամակագրության կամ բանակցությունների առարկա հանդիսացող հարցերի լուծման նպատակով՝ այս հարցում հեղինակի շահագրգոռությունը ընդգծելու կամ որևէ հարցի լուծում արագացնելու համար՝ օգտագործելով այն անձի ազդեցությունը, որին ուղարկվում է նամակը:

Ուսումնասիրությունը ինչքան էլ փակ համակարգ է, պաշտպանական համակարգի մի բաղադրիչ, չի կարող գտնվել մեկուսացված համաշխարհային ժամանակակից կրթության մոտեցումներից: Մենք այս համատեքստում դիտարկում ենք նաև ուսուցման ժամանակակից, այլնուրանքային մեթոդներն ու գործընթացները, որոնք ոչ միայն ձևավորում և զարգացնում են սովորողների լեզվական, հաղորդակցական կարողությունները, այլև կյանքի կոմպետենցիաները՝ քննադատական մտածողությունը, ստեղծագործ մտածողությունը, փոխգործակցելու կարողությունները, սովորել սովորելը (learning to learn), ինչպես նաև ուսումնառության գործընթացում առկա դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողությունները (learner autonomy): Ուստի առանձնացված մեթոդներն ու մոտեցումները դիտարկվել են այս տեսանկյունից ևս:

Հաղորդակցական-լեզվական մեթոդ: Հաղորդակցական-լեզվական մեթոդի դիտակետը, այն է, թե ինչպես է լեզուն ձևավորվում խոսքի ըն-

թացքում: Հաղորդակցական լեզվական մոտեցման ջատագովները գտնում էին, որ լեզուն նրա համար է, որ մարդիկ կարողանան հաղորդակցվել: Շատ մասնագետներ օտար լեզվի դասավանդման մոտեցումներից նախապատվությունը տայիս են հենց հաղորդակցականին: Մեթոդը սկիզբ է առել 1970-ական թվականների վերջերին, երբ աշխարհն անցնում էր երրորդ հաղորդակցական հեղափոխության միջով, այն է համացնից նախատիան սկսել էր մտնել մեր լյանք: Հաղորդակցական-լեզվական մոտեցման կիրառման ժամանակ կարևորն այն է, թե լեզուն ինչ նպատակով է օգտագործվելու: Մոտեցման առաջամարտիկները դիտարկում են լեզուն որպես հաղորդադակցական գործառույթներ իրականացնող միջոց: Ոլորտի առաջամարտիկներից Դեյվիդ Ուիլքինզը 1970-ականներին իր համախնիների հետ լեզուն դիտարկում էին այն համատեքստում, թե ինչ հաղորդակցական ֆունկցիաներ է այն կատարում և ինչ նպատակի է ծառայում: Մոտեցումն ավելի շատ լեզվի բանավոր կիրառման վրա է շեշտը դնում, քան գրավոր: Գաղափարն է կարողանալ հաղորդակցվել կենսական շատ տիպիկ իրավիճակներում, ինչպես օրինակ, մարդկանց տեղ իրավիրելը, ներողություն խնդրելը, համաձայնել կամ չհամաձայնելը ինչ-որ հարցերի շուրջը: Մոտեցումն ունի պրակտիկ նշանակություն, օրինակ այն կիրառելով հնարավոր է դուրս բերել կամ կազմել աշխատանքի վայրում հաղորդակցական հաճախ հանդիպող մոդելները, նոյն այդ մոդելների ամենահաճախ հանդիպող ցանկը: Եթե փորձենք դուրս բերել հաղորդակցական-լեզվական մոտեցման գլխավոր էռությունը, ապա այն հետևյալն է՝ եթե լեզուն դիտարկում ենք որպես հաղորդակցական ակտ, ապա ուսումնական ծրագիրը պետք է հիմնված լինի հաղորդակցական վարժանքների վրա, որի արդյունքում էլ լեզուն սովորելը դառնում է տրամաբանական սպասելի արդյունք: Մոտեցման ժամանակ ուսումնառողների համար հիմնականում իրական հաղորդակցական իրավիճակներ են ստեղծվում, որտեղ բուն հաղորդակցության բովանդակությունը գրուցակցին կամ լսարանին հասցնելն ավելի կարևոր է, քան խոսքի գրագետ օգտագործումը: Դերային խաղերը և մոդելավորումը (երբ ուսումնառողները խաղում են իրական դերեր դասարանախառային պայմաններում) հաղորդակացական-լեզվական մոտեցման հիմնական ձևերից են: Հաղորդակցական-լեզվական մոտեցումն ավելի ավանդական մոտեցումներից տարբերվում է ավելի ժամանակակից լինելով: Հաղորդակցական-լեզվական մոտեցման կիրառման ընթացքում ուսումնառողներն ունենում են հստակ հանձնառություն որոշ գործողություններ կատարելու և այդ նպատակով զարգացնում են իրենց հաղորդակցական-լեզվական կարողությունները: Ուսումնառողներն այս մեթոդի կիրառմամբ կենտրոնանում են այնպիսի բովանդակության վրա, որը պետք է բանավոր կամ գրավոր փոխանցեն և օգտագործում են ավելի շատ բառա-

մթերք՝ առանց կենտրոնանալու կոնկրետ լեզվական ծևերի ճշգրիտ պահպանման վրա: Դասավանդողը չի միջամտում հաղորդակցական ակտի ժամանակ և կոնկրետ ուղղություններ չի տալիս ուսումնառողջերին, եթե չեն դիմում օգնության: Նման գործողությունները նպատակ ունեն կրկնօրինակել իրականում հանդիպող իրավիճակները:

Մենք գտնում ենք, որ հաղորդակցական-լեզվական մեթոդը կիրառելի է ռազմական կրթության մեջ: Այս մեթոդի կիրառության ժամանակ անմիջապես ներդրվում է հաղորդակցական ակտը որպես ուսուցման գործընթացի մաս, ու այն առանձնահատկությունների շարքը, որ բնորոշ է չափահաս ուսումնառողջերին, օրինակ հարուստ փորձը, մասնագիտության մեջ փորձառությունը խորապես օգնում են մեթոդի արդյունավետ կիրառմանը: Հատկապես, երբ ընդհանուր անգլերենի գիտելիքները թույլ են տալիս զուգահեռ ուսումնասիրել ռազմական անգլերեն: Այս մեթոդի կիրառության ժամանակ կարող է օգտագործվել թարգմանություն, եթե դասավանդողը գտնում է, որ այն շահեկան է ուսումնառողջների համար: Կարդալու և գրելու հմտությունները կարող են ներդրվել հենց սկզբից նորից միայն ցանկության դեպքում: Դասավանդողները օգնում են ուսումնառողջներին այնքանով, որքանով այն մոտիվացնում է նրանց աշխատել լեզվի հետ (լսարանի առանձնահատկությունը դրվում է դասավանդման մեթոդի ընտրության կոնտեքստում): Այսինքն վերոքննարկյալ արտաքին մոտիվացիան ներդրվում է դասավանդողի կողմից ու քանի որ մեթոդը հաղորդակցական է, թույլ է տալիս դասընթացի շրջանակներում ընտրել այնպիսի դասագրքեր, հավելյալ նյութեր, որոնք բավարարում են լսարանի պահանջները, ավելացնում են ներգրավվածությունը, դրույմ նրանց դառնալ դերակատարներ ու արդյունքում ծևավորում ներքին մոտիվացիա, ինչն էլ մեթոդը դարձնում է ընդունելի ոլորտի մասնագետների կողմից:

Մեթոդի գիշավոր թիրախը հաղորդակցական կարողության ձևավորումն է, որն էլ ռազմական կրթության մեջ անգլերենի ծրագրի ռազմավարությունում կարևոր նշանակություն է:

Փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդ: Եզրույթը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ, անգլերենում «*inter*» փոխադարձ, «*act*» գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ գրուցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսիսով ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Դասավանդողի համար շատ կարևոր է իմանալ ուսումնառողի լեզվական մակարդակը, որպեսզի դասընթացը մշակվի ըստ համապատասխան մեթոդաբանության և դասավանդման նյութերի:

Ժամանակակից պահանջներից է ուսուցման գործընթացն իրականացնելիքին մոտեցնելը: Այլս բավարար չէ ուսուցումը՝ որպես կյանքի նա-

խապատրաստություն դիտարկելը: Ուսուցումը ինքը պետք է հիմնված լինի կյանքի իրավիճակների վրա: Հենց այդպիսին է ուսուցման ինտերակտիվ մեթոդը:

Ինտերակտիվ մեթոդը բոլոր ուսումնառողներին ընդգրկում է դասապրոցեսի մեջ: Յուրաքանչյուր մասնակից իր ներդրումն է ունենուն, տեղի է ունենում մտքերի, գիտելիքների փոխանակում: Փոխօգնության մթնոլորտում անցկացվող դասապրոցեսն էլ բերում է փոխներգործության ձևի:

Փոխներգործությունը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը մյուսների նկատմամբ:

Ինտերակտիվ մեթոդի սկզբունքներն են՝

- ❖ Փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- ❖ Ուսումնառողի ակտիվությունը,
- ❖ Համագործակցությունը,
- ❖ Ինքնարտահայտման խրախուսումը,
- ❖ Հետադարձ կապը և այլն:

Ռազմական ուսումնական հաստատությունների անզերեն դասավանդող մասնագետները փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդը նույնպես համարում են արդյունավետ ու կիրառում են դասընթացը կազմելիս ու շատ անգամ հիմնվում են մեթոդի առաջարկած հնարավորություններից: Մեթոդի շրջանակներում այլընտրանքային ուսուցանվող նյութերի, օրինակ էլեկտրոնային գրատախտակի, համակարգչի, առլիի սարքավորման կիրառումը հնարավոր է շատ հեշտությամբ կազմակերպել չափահաս ուսումնառողների հետ: Փորձը ցույց է տալիս, որ թիրախային լսարանը ավելի արագ արդյունքներ է գրանցում այս մեթոդի դեպքում՝ համարելով այն ոչ հոգնեցուցիչ, ավելի զվարճալի և միևնուն ժամանակ արդյունքին միտված:

Համակցման մեթոդ: Ինչպես անունն է հուշում այս մեթոդը միավորում է մի քանի մեթոդներ մասնագետի հայեցողությամբ: Ընտրողական մոտեցում է ցուցաբերվում առկա մեթոդների միջև ի նպաստ ամենաարդյունավետի: Համակցման մեթոդի ժամանակ համադրվում են առկա և առցանց ուսուցման ծները: Ժամանակակից աշխարհում, ուր մարտահրավերներն ամենուր են, մոտեցումը գնալով ավելի կիրառելի է դառնում ոլորտի մասնագետների կողմից: Տեխնոլոգիաների ներմուծումը դասընթաց նոր հնարավորություններ ու գործիքներ են ընձեռում դասավանդողներին և առաջարկում լեզվի դասավանդման մոտեցումներից հաճախ կիրառել հենց սա:

Այժմ քննարկենք լեզվի ուսումնասիրման հետևյալ մոտեցումները:

Անձնակենտրոն մոտեցում: Ցանկացած մոտեցում, որ ուսումնառողին ու նրա կարիքները դնում է ուսումնական գործընթացի կենտրոնում կարող է համարվել անձնակենտրոն մոտեցում: Ուսումնական ծրագիրը, աշխատանքային մեթոդները նախօրոք չեն ընտրվում դասավանդողի կողմից ուսումնական գործընթացի մեկնարկից առաջ, այլ համաձայնեցվում են երկու կողմերի հետ /Scrivener, 2011: 31:/:

Ուսանողակենտրոն մոտեցում: Վերջին տարիներին շատ է խոսվում ուսանողակենտրոն մոտեցման մասին: Նախկինում կիրառվող դասախոսակենտրոն մոտեցումը նոր կրթական մոտեցումների հետ մեկտեղ սկսել է իր տեղը զիջել ուսանողակենտրոնին: Բայց մոտեցման միայն նորարական լինելը չէ պատճառը, որ ուզմակրթական ոլորտի անգլերենի դասավանդողները որդեգրել են այս մոտեցումը, այլ դրա՝ թիրախային լսարանի առանձնահատկությունների հետ սերտ առնչությունը: Չափահաս ուսումնառողի դեպքում, ով չունի ներքին մոտիվացիա սովորելու օտար լեզու, ուսանողակենտրոն մոտեցումը ավելի կիրառելի է: Պարզաբանենք թե ինչու: Այս մոտեցման ժամանակ ուսումնառողներից յուրաքանչյուրը դերակատարում ունի դասապրոցեսի իրակացման ժամանակ, կարևորվում է ներգրավածությունը, այլ բնագավառում կուտակած փորձով ու հմտություններով կիսվելը: Ուսումնառողների առանձնահատկությունները (ավագ տարիք, ուզմական ոլորտում կուտակած մասնագիտական փորձ) թույլ են տալիս անզերենի դասավանդողներին այս մոտեցումը դիտարկել նախընտրելի ուզմակրթության մեջ:

Ուսանողակենտրոն մոտեցումը չի բավարարվում միայն ուսումնառողների դերի բարձրացմամբ, այլ իր հերթին ավելի մեծ պարտավորություններ է դնում դասավանդողի վրա ու պահանջում է, որ մասնագետները լինեն պրոֆեսիոնալ և պատրաստ ոչ միայն դասը վարելուն, այլև ճկուն լինելուն, ձեռքի տակ մշակված հավելյալ նյութեր ունենալ ցանկացած իրավիճակի փոփոխման դեպքում խուճապի չմատնվելու համար: Ըստ ուսանողակենտրոն մոտեցման դասավանդողը պետք է լինի ուղղողողի, իրահանգչի դերում, կառավարի գործընթացը, բայց միջամտի միայն անհրաժեշտության դեպքում: Սա ավելի պարտավորեցնող է, քան դասախոսակենտրոն մոտեցումը: Ուսանողակենտրոն մոտեցման ժամանակ ուսումնառողների մոտ ձևավորվում է ներքին մոտիվացիա և այն պահեն ու զարգացնելը երկուստեք ջանքեր է պահանջում թե ուսումնառողների, թե դասավանդողների կողմից:

Մենք կարծում ենք, որ դասավանդողները, կամ կրթական ծրագրերի պատասխանատուները ուզմական ուսումնական հաստատություններում օտար լեզու սովորեցնելու ուզմավարությունը մշակելուց առաջ պետք է հասկանան, թե գոյություն ունեցող ու փորձված դասավանդման

մեթոդներից և մոտեցումներից հենց որոնք են ծառայում տվյալ թիրախային խմբի կոնկրետ կարիքներին: Կարիքի վրա հիմնված կրթական ծրագրի մշակումն էլ հաշվի է առնում թիրախային խմբի թե՛ տարիքային առանձնահատկությունները, թե՛ մասնագիտությունը:

Մեթոդներն ու մոտեցումներն ուսումնասիրելիս անդրադարձանք նաև դրանց առաջացման ժամանակային կողմին: Լեզվի դասավանդման պատմությունն առանձնացված պատմություն չէ աշխարհի պատմությունից և այն հրամայականները, մոտեցումները, դիսկուրսները, որ գերիշխում են այս կամ այն պատմական ժամանակաշրջանում, իրենց տեղին ունեն լեզվի դասավանդման պատմության մեջ ևս: Պետք է նշել, որ 21-րդ դարում լեզվի դասավանդման առավել կիրառելի դասավանդման մոտեցումը հաղորդակցականն է և նրան համապատասխան մոտեցումների գործիքակազմը:

Հեղինակը կարծում է, որ իրականում շատ քիչ մասնագետներ, փորձագետներ են, որ ուղղորդվում են զուտ մեկ մեթոդով (բացառությամբ դեպքերի, երբ հաստատության կողմից պարտադիր նորմ է): Մոտեցման ու մեթոդի արդյունավետությունը կարելի է հասկանալ միայն դրանք կիրառության մեջ դնելով:

Քննության առնելով խնդրո առարկա ուսումնասիրության հիմնական ասպեկտները, ամփոփելով կարելի է եզրակացնել՝ ուազմական ուսումնական հաստատություններում անզերեն դասավանդելիս պետք է հաշվի առնել լսարանի առանձնահատկությունները, լեզվի դասավանդման այս կամ այն մեթոդի կամ մոտեցման ընտրությունը միշտ բխեցնել լսարանի և ուսումնական հաստատության կարիքներից, միաժամանակ հստակ սահմաններով չքաժանել ու իրար չհակադրել կիրառվող մեթոդներն ու մոտեցումները: Սահմանված ժամկետներում շոշափելի արդյունք գրանցելու համար էլ փորձել զուգորդել տարրեր մեթոդներ ու մոտեցումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Deci E.L., Ryan M.R. Handbook of Self-Determination Research. University of Rochester Press, 2004.
2. Harmer J. English Language Teaching, 5th edition. Pearson Longman Press, 2015.
3. Oxford R. Language Learning Strategies: What every teacher should know, 1st edition. New York: Newbury house, 1990.
4. Richards J. C., Rodgers T. S. Approaches and Methods of Language Teaching. Cambridge University Press, 1986.
5. Merriam S., Baumgartner L. Learning in Adulthood: a Comprehensive Guide, 4th edition. San Francisco: Jossey Bass Press, 2020.

6. Scrivener J. Learning Teaching, The Essential Guide to English Language Teaching, Third Edition. Macmillan, 2011.

А. ГРЗОЯН – Особенности преподавания английского языка в военно-учебных заведениях. – В данной статье рассматриваются особенности преподавания английского языка в военно-учебных заведениях. Анализируются две основные отличительные черты обучающихся, их статус взрослых учеников и тип мотивации, свойственный группе. В рамках «взрослого обучающегося» обсуждаются особые преимущества и недостатки целевой группы, изучающей язык.

Ключевые слова: военное образование, возрастные особенности обучающихся, мотивация как средство обучения, методы и подходы к обучению языка

A. GHRZOYAN – Peculiarities of Teaching English in Military Educational Institutions. – The present paper touches upon the peculiarities of teaching English in military educational institutions. It covers the distinctive features of the target group students. In the frame of the “adult learner” the paper discusses the particular advantages and disadvantages of the target group as a language learner.

Key words: military education, age characteristics of learners, motivation as a learning tool, language teaching methods and approaches

Received: 22.03.2022

Revised: 04.05.2022

Accepted: 17.06.2022

**Սաթենիկ ՍԱՐՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Թարգմանությունն օդար լեզվի ուսուցման մեջ գլխավոր և անփոխարինելի դեր ունի: Գոյություն ունեցող թեսլային վարժությունների բազմազանության հետ մեկտեղ, թարգմանությունը շարունակում է իր ուրուն դեղն ունենալ ուսուցման գործընթացներում, չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում այն անկըսվել կամ դուրս է մղվել ուսուցման ծրագրերից, գիրելիքների սպուզման համակարգերից: Հարկանշական է, որ բացի իմաստի փոխանցումից, այն նաև մեծապես նպաստում է լեզվական մի շարք հմտությունների զարգացմանը:

Բանալի բառեր. թարգմանական հմտություններ, բառապաշար, շրջասություն (բառափոխում), խմբային աշխատանք, դեքստրի ընդունություն, բառիմաստի բացադրություն, ժամանակի կարգավորում, հենքային գիրելիքներ, հակուկ մասնագիրական ոլորտին առնչվող բառեր

Օտար լեզվի դասավանդումը եղել և մնում է կրթական գործընթացի կարևորագույն ուղղություններից մեկը: Դասավանդման նորագույն մեթոդների մշակման և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ՝ փոխվում են նաև լեզուն սովորելու նախընտրությունները: Արդի աշխարհում, աստիճանաբար ավելի գերադասելի են դառնում համակարգչային (նաև առցանց) թեստերը, հարցաշարերը, վարժությունները, բազմակի ընտրություն (multiple choice) պարունակող թեստերը, լուղական ընկալումը ստուգող թեստերը, տեքստի ընկալումը ստուգող բազմակի ընտրությամբ հարցաշարերը, վարժությունները և այլն: Գիտելիքների գնահատման նպատակով կիրառվող և լեզվական հմտությունների զարգացմանը նպաստող միջոցների նմանօրինակ բազմազանությունը, դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին, աստիճանաբար, դուրս մղեց թարգմանությունը տարբեր վարժություններ պարունակող թեստային հարցաշարերից: Այսօր կիրառվող թեստերի մեծամասնությունը կազմված է բազմակի ընտրությամբ վարժություններից: Այս թեստերն, անշունչ, ունեն մեծ գործնական արժեք և առավելապես նպաստում են սովորողների գիտելիքների ամրապնդմանն ու լեզվական հմտությունների զարգացմանը: Թեստերի միջոցով է իրականացվում գիտելիքների

ստուգումն ու գնահատումը. դրանք նաև մեծ դեր ունեն անցած նյութը Ե՛լ ավելի ամրապնդելու գործում:

Հարկ է նշել, սակայն, որ թարգմանության դերը նույնականացնելու հարևած գիտելիքների ինչպես ձեռքբերման, այնպես էլ ստուգման և գնահատման գործում: Թարգմանությունը մշտապես եղել է օտար լեզվի դասավանդման հիմքում, քանի որ դրա միջոցով է ստեղծվել կապը մայրենի լեզվի հետ: Դեռևս վաղ ժամանակներից՝ որպես օտար լեզվի ուսուցման առավել արդյունավետ մեթոդ, կիրառվում էր Քերականական-թարգմանական մեթոդը, որը հետագայում, սակայն, տարբեր լեզվաբանների կողմից արժանացավ քննադատության /Palmer, Larsen-Friman & Anderson, Rivers և այլն/: Դրան նպաստեց Բերլիցի /Berlitz, 1887/ կողմից առաջ քաշված Ուղղակի մեթոդի (Direct Method) կիրառումը, որը կտրականապես ժխտում էր Քերականական-թարգմանական մեթոդի արդյունավետությունը՝ ուսուցման գործընթացում առավել արդյունավետ համարելով ուղիղ հաղորդակցումը:

Լեզվի ուսուցման մեջ թարգմանության կիրառման մեթոդը հաճախ անտեսվել է: Ավելին, շատ լեզվաբաններ այն համարում են ժամանակատար և անհմաստ հավանաբար այն պատճառով, որ այն երբեմն ասոցացվում է ավանդական Քերականական-թարգմանական մեթոդի հետ: Այս մեթոդի էռլեզունը կայանում է նրանում, որ դրա կիրառմամբ լեզուն դասավանդվում է յուրաքանչյուր բառ թարգմանելու միջոցով: Դրանում քերականությունն ու բառապաշարը սովորողին ուսուցանվում են թարգմանության ու սերտման միջոցով:

Թարգմանությունը, որպես ուսուցման մեթոդ, շատ քննադատությունների է արժանացել և թեստային համակարգի ներմուծման հետ մեկտեղ՝ համարվել է լեզվական իմաստի մեխանիկական փոխանցում մի լեզվից մյուսը: Ավելին, շատ մասնագետներ անտեսում են լեզվական այս կարևոր գործիքի օգտակարությունը, համարելով այն ոչ համապատասխան՝ սովորողի հաղորդակցական գործունեության իրականացման համար /Brown, 2007; Larsen-Freeman & Anderson, 2011; Thompson, 2012; Celce-Murcia, 2001; Harmer, 2007, Krause, 1916/:

Ըստ Բրաունի, ուսումնական գործընթացում թարգմանությունն «անհարմար» գործիք է լեզու սովորելու համար, քանի որ ուղղակի հաղորդակցումն ու անմիջական շփումն առավել կարևորվում են /Brown, 2007/:

Այդուհանդերձ, գոյություն ունեցող կարծիքների բազմազանության հետ մեկտեղ, թարգմանությունը եղել և մնում է ուսուցման գործընթացների արդյունավետությունն ապահովող կարևորագույն գործիքներից մեկը: Այն կիրառվում է թե՛ օտար լեզվի դասավանդման ընթացքում, թե՛ գրականության, լեզվաբանական գիտելիքների, տեսական և գործնա-

կան գիտելիքների փոխանցման նպատակով։ Հենց թարգմանության շնորհիվ է տեղի ունենում հաղորդակցումը տարբեր ազգերի, մշակույթների միջև։ Ուստի, թարգմանությունը ոչ միայն չպետք է դուրս մղվի ուսուցման գործընթացներից, այլ, ընդհակառակը, անհրաժեշտություն կա, որպեսզի դասավանդողների կողմից մշակվի համապատասխան մեթոդաբանություն՝ օտար լեզվի դասավանդման ծրագրերում թարգմանությունը՝ որպես լեզու ուսուցանելու կարևոր միջոց ներառելու նպատակով։

Կարևոր է նկատել, որ օտար լեզվի դասավանդման գործընթացում թարգմանության կիրառումը մեթոդաբանական առումով անփոխարինելի դեր ունի։ Թարգմանության միջոցով է սովորողը կարողանում ճանաչել իրեն անձանոթ բառերը, ընկալել նախադասությունները, այնուհետև տեքստերը և այլն։ Լեզվի ուսուցման սկզբնական շրջանում սովորողը թարգմանության միջոցով կապ է ստեղծում մայրենի լեզվից արդեն ծանոթ առարկաների, երևոյթների և օտար լեզվում դրանց համարժեքների միջև։

Թարգմանությունը նշանակալի դեր ունի նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում օտար լեզվի դասավանդման գործընթացում։ Այստեղ օտար լեզվի ուսուցման մեթոդներն ու բովանդակությունն էապես տարբերվում են հանրակրթական դպրոցներում կամ ավագ դպրոցներում կիրառվող մեթոդներից։ Բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական օտար լեզվի ուսուցանումը փոխում է դասավանդվող նյութի բովանդակությունը։ Այս դեպքում ուսանողը ծանոթանում է իրեն արդեն ծանոթ օտար լեզվի մի նոր ոլորտի, նոր շերտի հետ։

Հատկանշական է, որ մասնագիտական հատուկ տեքստերի հետ ծանոթանալին՝ ուսանողները, հաճախ, կանգնում են առաջին հայացքից անհայտահարելի թվացող խոչընդոտի առջև, քանի որ այն օտար լեզուն (այս դեպքում՝ անգլերենը), որ նրանք սովորել են մինչ այդ, մեծապես տարբերվում է այն անգլերենից, որը սկսում են սովորել հատուկ մասնագիտական տեքստերի վերլուծության և մեկնաբանման միջոցով։ Փորձը ցույց է տալիս, որ մասնագիտական տեքստերի ուսուցման այս գործընթացում առավել արագ են կողմնորոշվում այն ուսանողները, ովքեր ունեն բավարար գիտելիքներ և կարողանում են օտար լեզվի բառային միավորներն ու քերականական կառուցները նոյնացնելով մայրենի լեզվի համարժեքների հետ՝ ընկալել տեքստը և անխոչընդուռ անցում են կատարում դեպի ուսումնասիրվող լեզվի նոր ոլորտ։ Նման դեպքում ուսանողը տեքստից դուրս է գրում կամ առանձնացնում է մասնագիտական ոլորտին առնչվող այն բառերը, որոնք անձանոթ են, բայց կարողանում է տեքստը հաջողությամբ թարգմանել (օգտվելով բառարանից)՝ շնորհիվ հենքային գիտելիքների։

Հսարանում՝ տարբեր մեթոդների կիրառմամբ իրականացվող դասերի ընթացքում ձեռք բերված մեր փորձի ամփոփման և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ համապատասխան հենքային գիտելիքների բացակայության պարագայում, պատկերը բոլորովին այլ է, քանի որ նոր մասնագիտական բառապաշարի ընկալմանը հաճախ խոչընդոտում է քերականական կառուցների թերի իմացությունը: Նման իրավիճակում ուսուցանումն առավել դժվար է դառնում, քանի որ դասախոսի առջև դրվում է միաժամանակ մի քանի խնդիր: Այդ խնդիրները լուծելու և հաղթահարելու նպատակով, դասավանդողը փորձում է զարգացնել ուսանողի՝

- քերականական գիտելիքները;
- բառապաշարը;
- ընթերցանական հմտությունները;
- լսողական ընկալման հմտությունները և այլն:

Ավելին, նոր մասնագիտական բառապաշարի ներմուծմանը զուգընթաց՝ դասախոսն իր առջև խնդիր է դնում զարգացնելու ուսանողի՝ տեքստի ընկալման հմտությունները, ինչպես նաև վերարտադրելու հմտությունները, որի համար կիրառվում է թարգմանության մեթոդը: Թարգմանելով նոր բառապաշարը և օգնելով ուսանողին ընկալել այն համապատասխան համատեքստում՝ դասավանդողը կապ է ստեղծում մայրենի և օտար լեզուների միջև:

Թարգմանելու միջոցով լիարժեք ընկալելի դարձնելով տեքստը՝ հնարավոր է դառնում սովորողի մոտ զարգացնել նաև բառափոխման (paraphrasing) հմտությունները. Եթե ուսանողն արդեն լիովին ընկալել և յուրացրել է նոր բառապաշարը՝ կարելի է ամրապնդել այն բառափոխման միջոցով: Այս հմտության զարգացումը նույնպես շատ կարևոր է օտար լեզու դասավանդելիս: Այս մեթոդը նպաստում է, որ ուսանողի նոր ձեռք բերած բառապաշարի գիտելիքներն է' լ ավելի կայունանան. քանի որ, եթե ուսանողը կարողանում է նախադասությունը կամ տեքստի ցանկացած հատված վերարտադրել՝ փոխարինելով որոշակի բառեր իրենց հոմանիշներով կամ բացատրություններով, ապա, կարելի է փաստել, որ նոր բառապաշարը լիովին ընկալվել և յուրացվել է: Ավելին, բառափոխման հմտության շնորհիվ ուսանողը նաև հեշտությամբ կարողանում է տեքստը վերարտադրել թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով: Այստեղ կարևոր է նաև բարիմաստի ճիշտ կիրառումն ըստ համապատասխան համատեքստի: Այն է՛ եթե ուսանողին հանձնարարվում է բառափոխում կատարել՝ պետք է վերջիններիս օգնել ճիշտ կատարել հանձնարարությունը, քանի որ շատ հաճախ, դեռևս բավարար փորձ չունեցող ուսանողները սխալ են կատարում հանձնարարությունը՝ մեխանիկորեն փոխարինելով բառերը որոշակի հոմանիշներով: Այս դեպքում խախտվում է

տեքստի իմաստը, քանի որ ոչ բոլոր հոմանիշներն են ճիշտ ընտրվում: Ավելին, տարբեր բառեր պահանջում են տարբեր նախդիրներ կամ կապեր, որոնց առումով նույնպես ուսանողը պետք է ուշադիր լինի, պետք է կարողանա անսխալ փոխակերպել նախադասությունը և կատարել համապատասխան փոփոխությունները՝ ճիշտ փոխանցելով իմաստը:

Թարգմանությունը կարևոր դեր ունի նաև այլ լեզվական հմտությունների զարգացման գործում. ընթերցանության, լսողական ընկալման, գրելու, բանավոր խոսքի զարգացման և այլն: Այս բոլոր հմտությունները զարգանում են թարգմանելու հմտությանը տիրապետելու շնորհիվ: Ընդ որում, լեզվի ուսուցման այն փուլում, երբ ուսանողն արդեն գրեթե ամբողջությամբ տիրապետում է մասնագիտական հատուկ բառապաշարին և անձանոթ տեքստից դուրս գրվող նոր բառերի քանակը զգալիորեն նվազում է, գրավոր թարգմանելու անհրաժեշտությունն ավելի քիչ է: Այս դեպքում ուսանողը կարողանում է տեքստը կարդալ (արդեն ավելի սեղմ ժամանակահատվածում) վերարտադրել (պատմել), այդ թեմայի շուրջ կամ հենց տեքստի բովանդակության հիման վրա գրել համառոտ շարադրանք: Համառոտ շարադրանքը նպաստում է գրելու, շարադրելու հմտությունների զարգացմանը և ուսանողն արդեն կարողանում է ինքնուրովն շարադրություն կամ ակնարկ գրել որևէ թեմայի շուրջ:

Հարանում թարգմանական հմտությունները զարգացնելու տարբեր մեթոդների շարքում կարելի է առանձնացնել ընթերցանությունը: Սա ուսանողների համար առավել հետաքրքիր և արդյունավետ է դառնում հատկապես խմբային աշխատանքի ծնուզ: Այսպես՝ դասախոսը ընտրում է տեքստեր, կամ հոդվածներ (արդի հոդվածներ կարելի է ընտրել տարբեր կայքերից, օրինակ՝ www.wef.com, www.bbc.com, www.nytimes.com), բաժանում է լսարանը երկու կամ երեք խմբի և հանձնարարում է կարդալ, թարգմանել, վերարտադրել և մեկնաբանել հոդվածները որոշակի ժամանակահատվածում (3-7 րոպե): Պետք է նշել, որ շատ կարևոր է ժամանակի կարգավորումը (timing), քանի որ սեղմ ժամանակահատվածների սահմանումը մեծապես խթանում է ուսանողներին՝ ավելի արագ կատարելու տրված հանձնարարությունը: Խմբերը, միմյանց հետ մրցելով, փորձում են հնարավորինս արագ կատարել առաջադրանքը: Անձանոթ տեքստը թարգմանելուց և մեկնաբանելուց հետո՝ ծավալվում է քննարկում. տեքստը լիարժեք ընկալելու պարագայում՝ ուսանողները կարողանում են մեկնաբանել, վերարտադրել, քննարկել տեքստը, ինչպես նաև պատասխանել տրված հարցերին: Այս հմտության զարգացումը շատ կարևոր և արդիական է, քանի որ ուսանողը հետագայում կարողանում է այս հմտությունը կիրառել նաև տարբեր միջազգային քննություններ (TOEFL, IELTS) հանձնելիս:

Կարևոր է տեքստերի ընտրության հարցում որոշակի չափանիշների կիրառումը: Այս առումով, խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ ոչ շատ երկար, համեմատաբար, ավելի համառոտ տեքստերին: Այսպիսով.

- տեքստի բառապաշարը պետք է համապատասխանի ուսանողների գիտելիքներին, ինչպես նաև պետք է պարունակի նոր բառապաշար;
- տեքստի թեման պետք է լինի ուսանողների հետաքրքրությունների շրջանակներում. սա խթան է հանդիսանում, որպեսզի ուսանողները ազատ խոսեն և քննարկեն թեման, ակտիվ մասնակցություն ունենալով ծավալվող գրույցներում ու քննարկումներում:

Նոր (անձանոթ) բառապաշարի ներմուծումը (բացատրություն, մեկնաբանություն), նոյնպես կարևոր է, դասախոսը ուսանողներին է ներկայացնում անձանոթ բառերը և դրանց բազմակի իմաստները՝ օգնելով նրանց կողմնորոշվել, թե տվյալ համատեքստում, տեքստի հատկապես այդ հատվածում ի՞նչ իմաստով է տվյալ բառը գործածվել, կամ ի՞նչ իմաստ է արտահայտում:

Թարգմանական հմտությունների զարգացման մեկ այլ միջոց է հայերենից անգլերեն թարգմանությունը, որը նույնպես լսարանում կարելի է իրականացնել խմբային հանձնարարության ձևով: Օրինակ՝ դասախոսը ընտրում է հայերեն տեքստեր կամ հոդվածներ, ուսանողներին բաժանում երկու կամ երեք խմբի (ըստ ուսանողների թվի) և հանձնարարում թարգմանել՝ փոխանցելով հիմնական իմաստը (render): Այնուհետև համադրվում են աշխատանքի արդյունքները, համեմատվում են խմբերի մեկնաբանությունները, քննարկվում են կիրառված բառերն ու դրանց համարժեքները և այլն:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ թարգմանությունը կարևոր դեր ունի ուսուցման գործընթացում. դրա կիրառումը բարձրացնում է ուսանողի՝ լեզվական ընկալումը, բարելավում է լեզվական հմտությունները և նպաստում է մտքերի ճիշտ կառուցմանը: Այն, միաժամանակ, լուծում է տարբեր խնդիրներ. տեքստի ընկալում, վերարտադրում, բառապաշարի ամրապնդում, մտքերի շարադրում, կառուցում և այլն: Անփոխարինելի է թարգմանության դերը, քանի որ այն կիրառվում է ոչ միայն որպես լեզվի դասավանդման գործիք, այլև ըստ անհրաժեշտության՝ գործածվում է լեզվի տարբեր ոլորտներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berlitz M. D. The Berlitz method for teaching modern languages. First Book. New York. The Berlitz School, 1909.
2. Berlitz M. Méthode Berlitz. New York, 1887.

3. Brown H. D. *Teaching by Principle. An Interactive Approach to Language Pedagogy*. Third Edition. New York: Pearson Longman, 2007.
4. Brown H. D. *Principles of language learning and teaching* (5th ed.). Hoboken, NJ: Pearson ESL, 2006.
5. Celce-Murcia M. *Teaching English as a Second or Foreign Language*. Third Edition. Language Learning, 2001.
6. Harmer J. *The Practice of English Language Teaching*. Fourth Edition. Cambridge: Pearson Longman, 2007.
7. Howatt A. *A history of English language teaching*. Oxford, England: Oxford University Press, 1984.
8. Krause C. *The direct method in modern languages*. New York, NY, 1916.
9. Larsen-Freeman D., Anderson M. *Techniques & Principles in Language Teaching*. Oxford: Oxford University Press, 2011.
10. Palmer H. E. *The Scientific Study and Teaching of Languages*. London: Oxford University Press, 1968.
11. Richards J.C., Rodgers T.S. *Approaches and methods in language teaching: A description and analysis*. Cambridge: Cambridge University Press, 2001.
12. Rivers W.M. *Teaching Foreign Language Skills*. Chicago: University of Chicago Press, 1968.
13. Thompson G. *Some Misconceptions about Communicative Language Teaching* // *ELT Journal*, 50 (1), 2012.
14. www.wef.com
15. www.bbc.com
16. www.nytimes.com

С. САРОЯН – Роль перевода в процессе обучения иностранному языку. – В данной статье рассматривается перевод как ключевой инструмент в процессе обучения: наряду с различными методами, которые способствуют развитию языковых навыков, перевод углубляет языковые знания. Несмотря на то, что разработан целый ряд новых методов, материалов обучения и вариантов тестирования знаний, перевод продолжает оставаться одним из важнейших средств обучения и развития языковых навыков.

Ключевые слова: навык перевода, словарный запас, перефразирование, групповая работа, подбор текстов, определение слов, выбор определенного времени (тайминг), базовые знания, специальные термины (лексика)

S. SAROYAN – On Some Aspects of Application of the Translation Method in the Process of Foreign Language Teaching. – The present paper discusses the importance of translation in the teaching process of foreign languages. Although a

ՄԵԹՈԴԻԿԱ/METHODOLOGY

number of new teaching methods and versions of testing and training learners have been elaborated, translation continues to remain one of the key methods and tools for teaching and developing language skills. Alongside with other methods that help to develop different language skills, translation plays a pivotal role in deepening the knowledge of the language (vocabulary, grammar).

Key words: translation skills, vocabulary (word stock), paraphrasing, group work, selection of texts, definition of words, timing, basic knowledge, special terms (vocabulary)

Received: 03.05.2022

Revised: 06.06.2022

Accepted: 17.06.2022

**Լիյա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Հոդվածում քննության է առնվում օգարտ լեզվի յուրացման գործընթացում լեզվական սխալների դերի հարցը, համեմարվում են դարբեր հեղազորողների դեսակեբներն ու մոդեցումները: Վերլուծվում և դասակարգվում են Երևանի պետական համալսարանում ֆրանսերենի միջին մակարդակն (A2-B1) ուսումնասիրող ուսանողների գրավոր խոսքում հանդիպող լեզվական սխալները, քննարկվում դրանք ուղղելու նպարակով գործնականում կիրառված մեթոդները:

Բանալի բառեր. Ֆրանսերեն, լեզվական սխալներ, սխալների դասակարգում, սխալի ուղղում, միջանկյալ լեզու, բառային սխալներ, քերականական սխալներ

Ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման չափորոշիչներից է յուրացված գիտելիքների անսխալ և արդյունավետ կիրառումը սովորողների կողմից: Այդուհանդերձ սովորելու գործընթացն անհնար է պատկերացնել առանց սխալների, և որքան էլ տարօրինակ հնչի՝ դրանց առկայությունն է, որ ապահովում է ակնկալվող արդյունքը: Ժ.Պ. Կուֆը և Ի. Գրուկան պնդում են՝ «Յանկացած ուսուցում սխալի հավանական աղբյուր է» /Суq, Gruca, 2014: 389/:

Սխալների վերլուծությունը տասնամյակներ շարունակ եղել է հոգեբանների (Վ. Վունդտ, Զ. Ֆրեյդ, Զ. Մորտոն և այլք), մանկավարժների (Ի. Ա. Բողուևն դը Կուրտենե, Կ. Դ. Ուշինսկի), լեզվաբանների (Անրի Ֆրեյ) և այլոց ուշադրության կենտրոնում: Վերջին շրջանում այս առումով մեծ է օտար լեզուների դասավանդման դիդակտիկայի ներդրումը, ինչին կանդրադառնանք ստորև:

Ուսումնական գործընթացում լեզվական սխալների նկատմամբ վերաբերմունքը տարբեր ժամանակաշրջաններում տարբեր է եղել: Դրանց դերի մասին մեզ հայտնի առաջին հիշատակումը Վալտեր դե Բիբես-Վորտինն է՝ ֆրանսերենի քերականությանը նվիրված «Manières de langage» (1296թ.) աշխատության մեջ: Անգլերենի քերականության վերաբերյալ նման հետազոտություն կատարել է Ջոն Փալսգրեյվը՝ 1515թ., իսկ 1929թ. շվեյցարացի լեզվաբան Անրի Ֆրեյը հրատարակել է

իր հանրահայտ «La Grammaire des fautes» աշխատությունը /Cuq et al, 2004: 86/: Այս և հետագայում կատարված այլ հետազոտություններ ցոյց են տալիս, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացմանը զուգահեռ ուսուցման գործընթացում սխալների տեղն ու դերը տարբեր կերպ են մեկնաբանվել:

Օտար լեզուների դասավանդման ավանդական մեթոդի տեսանկյունից սխալը խիստ դատապարտելի էր, համարվում էր թերացման, ցածր առաջադիմության նշան: Դասավանդողի համար այն միջոց էր՝ հասկանալու, թե սովորողը որքանով է յուրացրել քերականական կանոնները: Լեզվի յուրացման ընթացքում թույլ տված սխալի համար սովորողը պատժվում էր այնպես, ինչպես կպատժվեր որևէ վատ արարքի համար: Նպատակը մեկն էր՝ խուսափել հետազայում դրանք կրկնելուց /Defays, Meunier, <http://journals.openedition.org/pratiques/2752>: 167-168/:

Ուղիղ մեթոդի էռկայունը կայանում էր օտար լեզուն առանց որևէ այլ լեզվի միջնորդության դասավանդելու մեջ: Սխալներ թույլ տալու հավանականությունն այս պարագայում մեծանում էր: Ք. Պոլենն իր «Լեզուների դասավանդման մեթոդիկայի պատմության» մեջ նշում է, որ մեթոդիստները մշակում են նոր տիպի քերականական առաջադրանքներ, որոնք պետք է սովորողներին հմտացնեին տվյալ քերականական երևութիւ կիրառման մեջ /Puren, 2012: 82-83/: Բնականաբար, դրանց օգնությամբ սխալները պետք է նվազագույնի հասցեին: Նոյն նպատակն էին հետապնդում նաև տեսալսողական առաջադրանքները, որոնց հիմքում ունկնդրումն ու կրկնությունն էր:

Անցյալ դարի 50-ականներին լայն տարածում է գտնում ուսուցման վարքաբանական տեսությունը, համաձայն որի ուսումնական գործընթացի նպատակը կրկնության միջոցով սովորողների մեջ համապատասխան վարք, այսինքն՝ տվյալ ազդանշանի նկատմամբ ցանկալի ռեակցիա ձևավորելն էր: Այսինքն՝ վարքաբանները գիտելիքի ձևավորման հիմքը համարում էին օրգանիզմի վրա արտաքին ազդեցությունը և նրա կողմից ցոյց տրվող հակազդեցությունը: Դրանց միջև եղած կապի շնորհիվ ձևավորվում է լեզվական հմտությունը: Հետևաբար կարևոր է ի սկզբանե բացառել սխալները, որպեսզի դրանք չամրապնդվեն լեզվում: Սովորողը պետք է կարողանա ցանկացած իրավիճակում, առանց վարանելու, ընտրել և օգտագործել ճիշտ քերականական կառուցներն ու բառապաշտը /Հազարենկո, 2013/:

Վարքաբաններն իրենց հիմնական խնդիրն էին համարում բացահայտել ազդակի և հակազդեցության միջև եղած կապն ու գործող օրենքները, որպեսզի կարողանան բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Այդուհանդերձ նրանք մարդու վարքը համեմատում էին սև արկդի հետ, որտեղ տեղի ունեցող երևություններն անհասա-

նելի և անմեկնելի էին: Հետևաբար ուսումնասիրության դաշտից դուրս էին մնում հովզերը, մոտիվացիան, երևակայությունը: Գիտակցության և մտածողության ուսումնասիրության վերաբերյալ խոսք անգամ չէր կարող լինել. դրանք համարվում էին աննյութական, գերբնական երևոյթներ, որոնք գիտական ուսումնասիրության առարկա լինել չէին կարող /Փրեյդյեր, Փեյդմեն, 2008: 291-321/:

Վարքաբանական ուղղության հիման վրա ձևավորվում են ուսուցման մի շարք նոր մեթոդներ: Այսպես, 60-ականներին Պ. Գուբերինայի և Պ. Ռեվինկի առաջարկած կառուցվածքային գլոբալ տեսալսողական մեթոդի (SGAV) տեսական հիմքը Բ. Ֆ. Սկինների վարքաբանական հոգեբանությունն է, որը վարքի ձևավորման գործում որոշիչ է համարում շրջապատի ազդեցությունը: Կառուցվածքային գլոբալ տեսալսողական մեթոդին ուշադրություն է դարձնում լեզվական չորս հմտությունների զարգացմանը, այդուհանդերձ առաջնությունը տրվում է բանավոր խոսքին և ունկնդրմանը: Սովորողները պետք է կարողանան ոչ միայն ճիշտ խոսել, այլև՝ լսել: Վարժություններն այնպես են կառուցված, որպեսզի կրկնության միջոցով վերջիններիս մոտ ձևավորվի անհրաժեշտ լեզվական հմտությունը: Մեթոդն առանձնապես կարսորում է գիտելիքի համակարգված մատուցումը: Դասավանդողը դուրս է հանում սովորողների սխալները, փորձում համակարգել դրանք՝ հետագայում բացառելու նպատակով /Сағ, Gruca, 2014: 389-392/:

Վարքաբանական տեսության հիման վրա 20-րդ դարի կեսերին ամերիկացի լեզվաբան Չարլզ Ֆրիզը ստեղծում է օտար լեզուների յուրացման *հակադրական* (*contrastive*) մոտեցումը, որը հետագայում զարգացնում է նրա աշակերտ և գործընկեր Ռոբերտ Լադոն /Fouillet, 2014/: Մեթոդը հավակնում է հեշտացնել օտար լեզվի յուրացման գործընթացը, կառուցվում է երկու լեզուների «համակարգված և ամուր» համեմատության, նրանց կառուցվածքային տարրերությունների ուսումնասիրության վրա /Debyser, 1970: 31-61/: Այս մոտեցման կողմնակիցների պնդմամբ օտար լեզվի յուրացման ժամանակ թույլ տրվող սխալների հիմնական պատճառը լեզուների փոխներթափանցումն է: Ընդ որում՝ դրանք դրսնորվում են տարրեր մակարդակներում՝ հնյունական, քերականական, բառային, հանրամշակութային: Սխալներից խուսափելու համար, ըստ հետազոտողների, անհրաժեշտ է նախապես համեմատել երկու լեզվական համակարգերը և բացահայտել դրանց միջև նմանություններն ու տարրերությունները:

Ճիշտ է, հակադրական վերլուծությունը լայն կիրառություն ստացավ, սակայն գործնականում չարդարացրեց իրեն: Կասկածի տակ դրվեցին մոտեցման տեսական հիմքերը, կանխատեսման հնարավորությունները: Փոխներթափանցումը, որը սխալների հիմնական պատճառն էր համար-

վում, ավելի հաճախ դիտվում էր նմանությունների, քան` խիստ տարբերությունների ժամանակ: Դիտվում էր նաև փոխներթափանցման հակառակ երևություն՝ լեզվակիրը խուսափում էր օգտագործել օտար լեզվի այն կառուցները, որոնք բացակայում էին մայրենի լեզվում: Բացի այդ, լեզվական երևությների կիրառության որոշ սահմանափակումներ ի հայտ էին գալիս կոնկրետ իրավիճակներում: Օրինակ՝ եթե հաղորդակցման ժամանակ օտար լեզվի պաշարներն անբավարար էին, սովորողները դիմում էին մայրենի լեզվի ռեսուրսներին:

Հետազայում առաջ եկած նոր ուղղություններում լեզվական սխալների նկատմամբ դիրքորոշումն աստիճանաբար փոխվում է: Այսպես, *հաղորդակցական* մոտեցումն արմատապես տարբերվում է նախորդներից՝ առավել կարևորելով հաղորդակցվելու անհրաժեշտությունը, քան` սխալների վրա կենտրոնանալը: Վերջիններս նույնքան կարևոր չեն, որքան միտքը հասկանալի ձևակերպելը: Հաղորդակցական մոտեցման կողմնակիցները խոսում են ոչ թե սխալների, այլ՝ վրիպակների մասին, որոնք անխուսափելի են և լեզվի յուրացման գործընթացի բնականոն մասն են հանդիսանում /Martinez, 2014: 71-87/:

Միշկանի համալսարանի պրոֆեսոր Լ. Սելինկերը, հիմնվելով լեզվական սխալների վերաբերյալ Փ. Քողերի ուսումնահրության վրա, որին կանդրադառնանք ստորև, առաջ է քաշում «միջանկյալ լեզվի» (interlangue) գաղափարը: Վերջինս մայրենի և օտար լեզուների միջև անցումային օղակ է, ունի իր կանոնները, որոնք տարբերվում են թե՛ թիրախային և թե՛ մայրենի լեզվի կանոններից: Եզակի և մշտապես փոփոխվող այս լեզվական համակարգն օտար լեզվի յուրացման ժամանակ օգնում է սովորողներին: Լ. Սելինկերը ոչ միայն այս համակարգին վերագրում է բնական լեզուներին բնորոշ հատկանիշները, այլև՝ առանձնացնում նրան բնորոշ մի քանի հիմնարար սկզբունք՝ ընդհանրացումներ թիրախային լեզվից, օրինաչափությունների փոխանցում մայրենի լեզվից և բրածոյացում, այսինքն՝ լեզվի գարգացման դադար /Gass, Selinker, 1994: 5/:

Խեղ. 60-ականներից սկսած տարածում է գտնում այն տեսակետը, որ օտար լեզվի յուրացման գործընթացում սխալներն ուղղորդող դեր ունեն և ցուց են տալիս, որ ուսումնական գործընթացն ընթանում է իր բնականոն հունով: Առանց սխալվելու հնարավոր չէ լեզու սովորել: Հարկ է, որ սովորողը գործնականում կիրառի իր ստացած գիտելիքները՝ չվախենալով սխալներ թույլ տալուց:

Սխալների վերլուծությունն ինքնանպատակ չէ և հստակ մանկավարժական նպատակ է հետապնդում: Հետազոտությունների արդյունքները կարող են օգտագործվել լեզվական երևությների յուրացման գործընթացն առավել ճիշտ և արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Սխալների վերաբերյալ առավել վաղ հետազոտությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեին, բացակայում էր դրանց մեկնաբանության տեսական հիմքը, երևույթը բացատրելու, հիմնավորելու փորձեր չեն արվում: Այս առումով առաջին հիմնավոր վերլուծությունը կատարել է Էդինբրուրգի համալսարանի կիրառական լեզվաբանության պրոֆեսոր Ս.Փ. Քորդերը: Նա սխալները դասակարգում է երկու տիպի՝ *mistakes* (ֆր. *fautes*) և *errors* (ֆր. *erreurs*): Առաջին դեպքում սովորողները հոգնածության, սթրեսի, անինքնավստահության, կամ այլ գործոնների ազդեցությամբ վրիպում են, չեն կարողանում օգտագործել ճիշտ կառուցքը: Այդուհանդերձ նրանք գիտեն կանոնները և ի վիճակի են ինքնուրույն ուղղել իրենց սխալները: Իսկ երկրորդ տիպի սխալները շեղումներ են կանոններից, որոնց խոսողը չի տիրապետում և ինքնուրույն չի կարող ուղղել: Իր հետագա աշխատանքներում Ս. Պ. Քորդերը հստակ ձևակերպում է սխալների վերլուծության գործընթացը, տալիս դրանց նկարագիրը, դասակարգումը՝ ըստ ենթադրյալ պատճառների /Corder, 1967:161-170/:

Հետազոտողներն առաջարկել են սխալների դասակարգման տարրեր մոտեցումներ: Այսպես, Ֆրանսիայի մանկավարժական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի գնահատման և որակավորման բաժնի տնօրեն Ք. Տագլիանտեն գտնում է, որ պետք է տարրերակել լեզվական, հնչյունական, հանրալեզվական, դիսկուրսիվ և ստրատեգիական սխալներ /Tagliante, 2001/: Իսկ հոգեբան Ջեյմս Ռիզոնը գտնում է, որ սխալների վերլուծության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել հիմնականում հետևյալ գործոններին՝ առաջադրանքի բնույթը, կատարման պայմանները, գործունեությունը վերահսկող մեխանիզմներն ու թեմայի առանձնահատկությունը /Reason, 1993/:

Այսօր էլ կրթական համակարգում առաջադիմության ցուցանիշը սահմանվում է սխալի նկատմամբ, ուստի և' օտար լեզուն դասավանդողի, և' այն սովորողի հիմնական նպատակներից է սխալները նվազագույնի հասցնելը: Բայց և չպետք է մոռանալ, որ սխալն այն կամուրջն է, որը կապում է մայրենի և օտար լեզուները: Եթե սովորողն անսխալ տիրապետեր նոր նյութին, անշուշտ, դա ուսուցանելու կարիք չէր լինի:

Օտար լեզվի յուրացման գործընթացն առավել արդյունավետ կլինի, եթե սովորողն իր ուշադրությունն ու ջանքերն առավելապես կենտրոնացնի ստացած լեզվական գիտելիքների օգնությամբ իր առջև դրված հաղորդակցական խնդիրները լուծելու, այլ ոչ թե ամեն գնով հնարավոր սխալներից խուսափելու վրա: Հետևաբար, կարևոր է թե՛ դասավանդողների և թե՛ սովորողների շրջանում ձևավորել այն դիրքորոշումը, որ սխալներն ուսումնական գործընթացի կարևոր և անխուսափելի բաղադրիչն են, յուրօրինակ մանկավարժական գործիք: Եթե պայմանականորեն ընդունենք, որ օտար լեզվի յուրացման ընթացքում մայրենի և

օտար լեզուների միջև ձևավորվում է միջանկյալ լեզվական օղակ, ապա կարելի է ասել, որ սխալը հենց դրա դրսնորումն է և ցուց է տախս, որ սովորողը գտնվում է լեզվի յուրացման անցումային փուլում: <Ետևաբար, սխալների վերլուծությունն ուղղորդում է սովորողին, օգնում առաջադիմության մեջ:

Օտար լեզվի յուրացման ընթացքում հանդիպող սխալների բնույթը մեծապես կախված է լեզվի տիրապետման մակարդակից: Մեր դիտարկումները ցուց են տվել, որ լեզվի յուրացման նախնական փուլերում առավել հաճախ են ուղղագրական և քերականական սխալները, իսկ լեզվի իմացության բարձր մակարդակներում մեծանում է շարահյուսական և ոճական սխալների ծավալը: Սույն հետազոտության համար հիմք ենք ընդունել ֆրանսերենի ուսուցման A2-B1 մակարդակը:

Օտար լեզվի յուրացման ընթացքում հանդիպող սխալները դասակարգել ենք հետևյալ կերպ.

- Ուսուցանվող նյութի և վարժությունների պահանջների բովանդակության ոչ լիարժեք ընկալմամբ պայմանավորված սխալներ, որոնք պայմանականորեն անվանել ենք բովանդակային:

- *Լեզվական սխալներ*, որոնք դասակարգել ենք ըստ բառային և քերականական մակարդակների:

Սույն հետազոտության մեջ սխալների վերլուծությունը կատարել ենք ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում ֆրանսերեն ուսումնասիրող ուսանողների գրավոր խոսքում հանդիպած լեզվական սխալների հիման վրա, որոնք դասակարգել ենք հետևյալ կերպ.

1. **Բառային սխալներ**, որտեղ տեղ են գտել ուղղագրական, հնյունական, նաև՝ համանունությամբ, հարանունությամբ և սեռի կարգով պայմանավորված սխալները:
2. **Քերականական սխալներ**, որոնք պայմանավորված են քերականական կանոնի սխալ կիրառմամբ (օրինակ՝ համաձայնեցման դեպքերը ֆրանսերենում):

Յուրաքանչյուր խմբում ներառված սխալները բաժանել ենք ենթախմբերի: Այսպես, բառային սխալների մեջ առանձնացրել ենք հետևյալ ենթախմբերը:

1. **Ուղղագրական սխալներ** - Լեզվի յուրացման նախնական փուլում այս սխալները առավելապես պայմանավորված են ֆրանսերենի ուղղագրության առանձնահատկություններով, որոնց սովորողները դեռևս լիարժեք չեն տիրապետում: Օրինակ՝ հաճախ են տառամիացությունների ուղղագրությամբ պայմանավորված սխալները՝ scolere (scolaire), en tailleur noir (tailleur), aurpheline (orphelin), boulangaire (boulangère), chinion (chignon), contrer (contraire), caractaire (caractère), tu (tout) se passe bien,

բայց ոչ միայն՝ proffession (profession), chaqu'un (chacun), և այլն:

2. **Համանունությամբ պայմանավորված սխալներ** - Սրանց հետ գործ ունենք այն դեպքում, երբ սովորողները շփոթում են նույն գրություն կամ արտասանություն ունեցող բառերը՝ (des) fêtes / (vous) faites, très / traits, qu'en merchant / quand merchant, gaieté / guetter, ces / ses, ce sont / se sont, mai / mais, s'entend / sentant, d'autres fois / d'autrefois, cette / cet, scène / seine:

3. **Հարանունությամբ պայմանավորված սխալներ** - Սրանք իրենց հերթին հանգեցնում են իմաստային սխալների՝ amener / emmener, emporter / apporter բառերի դեպքում, նաև՝ singe / signe, averse / inverse, faim / femme, incendie / incident, և այլն:

4. **Բառի սեռով պայմանավորված սխալները** – Այս սխալները բնորոշ են ֆրանսերենի յուրացման գործընթացին: Նման սխալների հիմնական պատճառները երկուսն են: Նախ՝ ֆրանսերենի ոչ բոլոր բառաձևերից ելնելով է հնարավոր որոշել սեռը. չափազանց շատ են շեղումները կանոններից: Այսպես, -e ձայնավորը համարվում է իգական սեռի ցուցիչ, այդուհանդերձ ուն թանգարան, ուն պրոբլեմ, ուն մոդել և շատ այլ գոյականներ, որոնք ձևով հիշեցնում են իգական սեռ, իրականում պատկանում են արական սեռին: Դժվարությունների մյուս պատճառը արտասանության նմանությունն է: Այսպես, cet և cette ցուցական դերանվանական ածականների կիրառության հետ կապված շփոթմունք է առաջանում, եթե ուսանողը հստակ չգիտի նրան հաջորդող ձայնավորով կամ համր հ-ով սկսվող գոյականի սեռը: Օրինակ՝ cette univers ձևը՝ cet սունակ կիրարեն: Մեկ այլ օրինակ է ձայնավորով, համր հ-ով սկսվող գոյականներից առաջ ածականների համապատասխան ձևերի սխալ կիրառությունը, քանի որ հստակ չգիտեն գոյականի սեռը՝ vieil/vieille, bel/belle, nouvel/nouvelle, և այլն: Օրինակ՝ une vieille océan՝ ուն vieil océan-ի փոխարեն:

5. **Հնյունական սխալներ** - Սրանք պայմանավորված են ոչ լիարժեք ունկնդրմամբ, բանավոր խոսքի ոչ ճիշտ ընկալմամբ: Օրինակ՝moués (mouillés), consantré (concentré), trambler (trembler), cependant (cependant), éyant (ayant), italiane (italien), նաև՝ anvers (inverse), dictants (dictons), andepondance (indépendance), avensions (inventions), enversion (inversion), je été (j'ai été), j'ai voulais (je voulais):

Մեր դիտարկած օրինակներում քերականական սխալները հիմնականում պայմանավորված են համաձայնեցումներով.

1. **Ենթակայի և ստորոգյալի համաձայնեցման սխալներ՝** c'était (étaient) des amis, tu me raconte (racontes), il ne pourrais (pourrait), les conseils qui nous intéressons (intéressent), les gens ne lit (lisent) pas, le médecin peux (peut), les gens qui a (ont):

2. Խնդրի հետ համաձայնեցման սխալներ՝ elle l'avait reconnu (reconnue), nous mentons pour se (nous) disculper, և այլն:

3. Թվի համաձայնեցման սխալներ՝ որոշից/գոյական/ածական կառուցներում՝ les jour (s), ses cheveux blanc(s) tressé(s) était (étaient) coiffé (s), les cheveux noir (s), des livre (s) électronique (s), des médicament (s), և այլն:

4. Սերի համաձայնեցման սխալներ՝ la liberté est plus important (e), la vie passif (passive), les grand(es) villes qui est (sont) très dangereuse (s), les yeux rougies (rougis), la maîtresse était fou (folle) et insolant (e), cette ville sera découvert(e), les élections présidentiel (présidentielles), և այլն:

Սխալների արձանագրմանը հաջորդող կարևոր քայլը դրանց ուղղումն ու մեկնաբանությունն է, որոնք ուսումնական գործընթացի պարտադիր մասն են հանդիսանում, ապահովում են լեզվական գիտելիքների յուրացման գործընթացի արդյունավետությունը: Պետք է հաշվի առնել, որ սովորողները տվյալ լեզվով հաղորդակցվելիս հաճախ լարվածություն, հուզմունք են զգում, որոշ դեպքերում՝ նույնիսկ տագնապ: Դրանց պատճառը հիմնականում սխալ թույլ տալու մտավախությունն է: Հոգեբանական այսպիսի լարվածության թույլացումը մեծապես կախված է նաև դասավանդողի՝ սխալներն ուղղելու նկատմամբ ունեցած դիրքորոշումից:

Օտար լեզվի յուրացման գործընթացի առաջին և կարևոր նախապայմանն այն է, որ սովորողները պատրաստ լինեն սխալներ թույլ տալուն: Այսինքն՝ նրանց պետք է նախապատրաստել նրան, որ օտար լեզվի յուրացման ողջ գործընթացում սխալներն անխուսափելի են, և դա լեզվի յուրացման բնականոն ընթացքն է: Նման դիրքորոշումը զգալիորեն փոխում է սխալի նկատմամբ բացասական վերաբերմունքը, նպաստում փոխադարձ վստահության մթնոլորտի ծևավորմանը:

Կարևոր է նաև սխալի ուղղումը պատշաճ ծևով և ճիշտ պահին: Անթույլատրելի է սխալների պատճառով սովորողներին ծաղրելն ու նրանց վրա ծիծաղելը. սա էթիկայի կարևոր կանոն է թե՛ դասավանդողի, և թե՛ սովորողների համար:

Բանավոր հարցման ժամանակ սովորողի խոսքին կարելի է միջամտել միայն այն դեպքում, եթե սխալը խանգարում է միտքը ճիշտ արտահայտելուն: Անդադար ընդհատելն ու ուղղումներ կատարելն ի վերջո կարող են հանգեցնել արգելակման և սովորողի մոտ անխնքնավստահության ծևավորմանը: Առավել նպատակահարմար է նշումներ կատարել և հետազյում անդրադառնալ թույլ տրված սխալներին:

Խմբային աշխատանքների ժամանակ կարիք չկա անվանապես նշել սխալների հեղինակներին: Առավել ցանկալի է դրանց անդրադառնալ աշխատանքի ամփոփման ժամանակ:

Սխալների ուղղման բավական նրբանկատ մոտեցում է այսպես կոչված «ներակա ուղղումը», երբ դասավանդողն արձանագրում է սխալները, սակայն ուղղակիորեն չի անդրադառնում դրանց, այլ խոսքի մեջ միտումնավոր օգտագործում է դրանց ճիշտ տարբերակները:

Սխալների մեր վերլուծությունը, ինչպես արդեն նշել ենք, կատարել ենք ֆրանսերենի A2-B1 մակարդակն ուսումնասիրող հայ ուսանողների գրավոր աշխատանքների հիման վրա: Այդ աշխատանքները հետապնդել են կոնկրետ ուսուցողական նպատակներ, այսինքն՝ վերաբերել են ուսումնասիրվող որոշակի թեմաների՝ թե՛ քերականական, և թե՛ բառապաշտի յուրացման: Այս պարագայում արդյունավետ ենք համարել կիրառել սխալների ուղղման տարբեր եղանակներ, որոնց կանդրադառնանք ստորև:

Առավել հաճախ կիրառել ենք սխալների ինքնուրույն ուղղումը՝ ընդգծել ենք դրանք, այնուհետև սովորողներն ինքնուրույն ուղղել են սխալները՝ հղում կատարելով նախապես ուսումնասիրված նյութերին: Ինքնուրույն վերլուծական աշխատանքը բավական արդյունավետ է ուսումնասիրած նյութի հիմնավոր յուրացման առումով:

Հաջորդ եղանակը, որին դիմել ենք, սխալների փոխադարձ ուղղումն է: Սովորողներն աշխատել են զուգերով, ստուգել միմյանց աշխատանքները, այնուհետև՝ արդյունքները քննարկել դասախոսի և լսարանի հետ՝ հիմնավորելով կատարած ուղղումները: Նման աշխատանքն առանձնապես կարևոր է նյութը կրկին քննարկելու և պարզաբանելու տեսանկյունից, օգնում է սովորողներին կենտրոնացնել ուշադրությունը, բացահայտել սխալներ, որոնք կարող էին ուղղում կատարելու ընթացքում վրիայել:

Պարբերաբար սովորողներին հնարավորություն է ընծեռվել ուղղելու սեփական աշխատանքը՝ ծեռքի տակ ունենալով ճիշտ տարբերակը, որից հետո սխալներն ամփոփվել և ի մի են քերվել:

Ուսուցողական թելադրությունների արդյունքներն ամփոփվել են համընդհանուր քննարկումների միջոցով՝ նախադասություն առ նախադասություն անդրադառնալով նյութին, մեկնաբանելով խնդրահարուց կետերը:

Սխալների ուղղման մեկ այլ՝ առավել նորարարական մոտեցում էր առցանց առաջադրանքների կատարումը՝ հանձնարարությունների արդյունքները տեղուած ստուգելու և թույլ տված սխալների մեկնաբանությունները միանգամից տեսնելու հնարավորությամբ: Նման առաջադրանքները կատարվել են սովորողների կողմից ինքնագնահատում իրականացնելու նպատակով:

Ամփոփիչ աշխատանքներում սխալների ուղղումը կատարել է դասավանդողը՝ ընդգծելով դրանք, ներկայացնելով ճիշտ տարբերակն ու կատարելով անհրաժեշտ մեկնաբանությունը:

Սոհասարակ ուսումնական ողջ գործընթացը կառուցվել է այն դիրքորոշման վրա, որ սխալների առկայությունը լեզվի յուրացման գործընթացի բնականոն ընթացքի մասն է և ամենակին էլ չի հակադրվում բուն ուսումնական գործընթացին։ Սխալների ուղղման ընթացքում շեշտն առավելապես դրվել է սովորողների ձեռքբերումների վրա, ինչը, անկասկած, բարձրացրել է նրանց ինքնավստահությունն ու խթանել սովորելու ցանկությունը։

Սխալների ուղղման վերոհիշյալ մոտեցումների միջոցով դրանց ընդհանրացումն ու մեկնաբանությունը զգալիորեն նվազեցնում են սխալները կրկնելու հավանականությունը։ Հարկ է նշել նաև, որ նման աշխատանքը ուսումնասիրության հարուստ նյութ է հանդիսանում դասախոսի համար՝ հետազոտություն տվյալ թեմաների մատուցման նոր եղանակներ մշակելու և հնարավոր վրիպումները կանխելու համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Corder P. The significance of learner's errors // *International Review of Applied Linguistics*, № 5, 1967 // URL: <http://www.uky.edu/~tmclay/Corder%201967.pdf> (Retrieved January 3, 2022).
2. Cuq J.P., Association de didactique du français langue étrangère Dictionnaire de didactique du français langue étrangère et seconde. Paris: CLE international, 2004.
3. Cuq J.-P., Gruca I. Cours de didactique du français langue étrangère et seconde. Presse universitaire de Grenoble, 2014.
4. Debyser F. La linguistique contrastive et les interférences // *Langue Française*, № 8, 1970 // URL : www.jstor.org/stable/41557515 (Retrieved June 1, 2021).
5. Defays J.-M., Meunier D. Cachez cette erreur que je ne saurais voir ! // URL : <http://journals.openedition.org/pratiques/2752> (Retrieved January 10, 2021).
6. Desmonds F. Enseigner le FLE: pratiques de classe. Edition Belin, 2005.
7. Fouillet R. Les «recettes contrastives» dans les grammaires du français pour italophones // *Langue française*, № 181, 2014/1 // URL: <https://www.cairn.info/revue-langue-francaise-2014-1-page-19.htm> (Retrieved May 12, 2021).
8. Gass M., Selinker L. Language transfer in language learning. Revised Edition. John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 1994 // URL: https://books.google.am/books?id=srz1gXPXBowC&pg=PA5&lpg=PA5&dq=Language+transfer.+Selinker,+1969&source=bl&ots=aSpn_qkrpb&sig=ACfU3U2FWCoi6bEqdu_iU32jXxIIA1JbHA&hl=en&sa=X&ved=2ahUKEwj0zcnmr9n1AhVFQvEDHXdFAnoQ6AF6BAgtEAM#v=onepage&q&f=false

9. Martinez P. La Didactique des langues étrangères // *Collection Que sais-je ?* Presse Universitaire de France, 2014.
10. Namukwaya H.K. Analyse des erreurs en production écrite des étudiants universitaires du français au niveau intermédiaire à l'Université de Makerere // *Synergies Afrique des Grands Lacs*, №3, 2014 // URL: https://gerflint.fr/Base/Afrique_GrandsLacs3/Harriet_K_%20Namukwaya.pdf (Retrieved March 23, 2021)
11. Puren Ch. Histoire des méthodologies de l'enseignement des langues. CLE international, 2012 // URL: <https://www.christianpuren.com/mes-travaux/1988a/> (Retrieved April 7, 2021).
12. Reason J. L'erreur humaine. Presse Universitaire de France, 1993.
13. Rosier J.-M. La didactique du français // *Collection Que sais-je?* Presse Universitaire de France, 2002.
14. Tagliante C. La classe de langue. Paris: Clé international, 2001.
15. Гез Н.И., Фролова Г.М. История зарубежной методики преподавания иностранных языков. Москва, 2008.
16. Кондрашова Н. В. Прогнозирование и исправление студенческих ошибок при обучении иностранным языкам // *Научный диалог*, № 7 (43), 2015.
17. Маркосян А. С. Очерк теории овладения вторым языком. Москва: УМК “Психология,” 2004.
18. Назаренко А. Л. Информационно-коммуникационные технологии в лингводидактике: дистанционное обучение. Москва, 2013.
19. Фрейджер Р., Фейдимен Дж. Большая книга психологии. Личность. Теории, упражнения, эксперименты. Санкт-Петербург, 2008.

Л. ВАРДАНЯН – Языковые ошибки при обучении французского языка как иностранного. – В настоящей статье рассматривается роль языковых ошибок в процессе изучения иностранного языка, сравниваются взгляды и подходы разных исследователей. Анализируются и классифицируются лингвистические ошибки в письменной речи студентов, изучающих французский язык на уровне A2-B1 в Ереванском государственном университете, обсуждаются практические методы их исправления.

Ключевые слова: французский язык, языковые ошибки, классификация ошибок, исправление ошибок, интерязык, лексические ошибки, грамматические ошибки

L. VARDANYAN – Linguistic Errors in Teaching French as a Foreign Language. – This paper focuses on the discussion of linguistic errors and their role in the process of learning as a foreign language. The existing approaches to the problem

under discussion are examined, the point of views of different researchers are compared. Linguistic errors in the written speech of students studying the French at the A2-B1 level at Yerevan State University are analyzed and classified, and practical methods of their correction are discussed.

Key words: French language, linguistic errors, error classification, error correction, interlanguage, lexical errors, grammatical errors

Received: 11.02.2022

Revised: 04.04.2022

Accepted: 22.04.2022

ԳՐԱՎԱԾԳԻՏՈՒԹՅՈՒՆ

DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2022.26.1.126>

Նատալի ԳՈՆՉԱՐ-ԽԱՆՁՅԱՆ
Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԲՈՐԽԵՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հոդվածը նվիրված է ականավոր մրգածող գրող Խ. Լ. Բորխեսի անդրադարձին գրականության մեջ ճապոնական մշակութային ավանդույթին, դրա սյումեներին և կերպարներին, ինչպես նաև արևելքում լայն դարածված բուդդիայականության ճապոնական փարբերակին՝ ձեն-բուդդիայականության ուսմունքի փիլիսոփայական ընկալմանը: Ճապոնական մշակույթի մի շարք հիմնական մոդիվներին է անդրադառնում անգենդինացի մեծանուն գրող և մշակութաբան Խ. Լ. Բորխեսը, ինչպիսիք են՝ պոեզիայի հուզական շերպերը, ժամանակակից ոճական առանձնահարկությունները, էպիկական անցյալի դրվագները, հոգերանական խորհմասքությունը, պատվախնդրությունը և այլն:

Բանալի բառեր. ճապոնական գրականություն, ավանդույթներ, ձեն-բուդդիայականության ըմբռնում, իսե Մոնոզադարի, Ակուրագավա Ղյունուկե, արքայազն Գենջի

XX դարի մեծագույն գրողներից և մտածողներից մեկի՝ Խ. Լ. Բորխեսի ստեղծագործությունները կարևոր նշանող են դարձել նախորդ հարյուրամյակի հոգևոր կյանքում մեծապես պայմանավորելով գրականության և առնչվող գիտությունների (հերմենուսիկա, նշանագիտություն և այլն) զարգացումը մեր օրերում: Արգենտինացի դասականի գործերը թարգմանվել և թարգմանվում են բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ հայերեն, նրա ստեղծագործությունն ավելի քան կես դար համաշխարհային գրականագիտության ուշադրության կենտրոնում է՝ ուսումնասիրվելով ինչպես մշակութաբանական, գաղափարական-աշխարհայացքային, բարոյափոխական տեսանկյունից, այնպես էլ գեղարվեստական կա-

ողուզվածքի ինքնատիպության, ժանրային կազմի յուրահատկության և պոետիկայի նորադրությունների առումով:

Գրողի գաղափարական-գեղարվեստական աշխարհը ներառում, համադրում և միահյուսում է արևմուտքի և արևելքի տարատեսակ մշակութային ավանդույթներն ու փորձը, նրա բազմաժանր տեքստերում սյուժեների, կերպարների և խորհրդանշական տարրերի միջոցով արտացոլվում է Բորիսեսի առանձնահատուկ հետաքրքրությունն արևելյան առասպելների, արքետիպերի, կրոնական ուսմունքների, գրականության և փիլիսոփայության նկատմամբ: Իբրև գրողի և մտածողի՝ Բորիսեսին ամենից հոգեհարազատ է բուդդիայականությունը, որը հանդուրժողականության, ազատ ընտրության, հոգևոր տոկունության և պայծառացման գաղափարներով համահունչ է քրիստոնեությանը:

Նկատի ունենալով Բորիսեսի մի շարք տարաբնույթ տեքստերում առկա բազմաթիվ հիշատակումները՝ պարզ է դառնում, որ գրողը քաջածանոթ էր ոչ միայն ընդհանրապես բուդդիայական արևելքին, այլև մասնավորապես «Երկնային» կայսրությանը և Ծագող արևի երկրին, դրանց պատմությանը և մշակույթին, կրոնական ուղղություններին, առասպելներին, բանահյուսությանը, թատրոնին, գրականությանը: «Բորիսը և Ես» էսեում գտնում ենք հետևյալ միտքը. «Ես,<...> մի կողմ թողնելով արվարձանների առասպելը, ժամանակի և անսահմանի մասին խաղեր, պետք է հորինեմ: Եվ այդպես, ողջ կյանքս փախուստ է, և կորցնում եմ ամեն ինչ, և ամեն ինչ մոռացում է, կամ էլ պատկանում է նրան՝ մյուսին: Իրականում չգիտեմ, թե մեզնից որն է գրում այս էջը» /Բորիսես, 1992: 257/: Հենց այն ժամանակ, երբ Բորիսեսի արձակում և հատկապես էսեներում սկսվում են «ժամանակի և անսահմանի մասին խաղերը», երբ ծնավորվում, իսկ հետագայում բազմապատկվում, տարատեսակ գուգորդումներով դրսնորվում են բորիսեյյան խորհրդանշաներն ու այլաբանությունները (գիրքը, գրադարանը, այգին, տաճարը, լաբիրինթոսը, շրջանները, շրջապտույտը, երազը, հայելին, մեկ երևույթի անվերջանալի կրկնապատկումները, ճամփարաժանները և այլն), ակնհայտ է դառնում նրա հետաքրքրությունը չինական «մետաֆիզիկայի», բանահյուսության, գրականության նկատմամբ:

Եթե չինական թեմատիկան գրողի ստեղծագործական ժառանգության անվիճելի լեյտմոտիվներից է, որն անմիջականորեն արտացոլվում է բազմաթիվ պատմվածքներում, բանաստեղծություններում, էսեներում և ծավալուն ներկայություն ունի «Հորինված էակների գիրքը» ժողովածուի մեջ, ապա Ճապոնիային Բորիսեսի անդրադարձները պակաս հաճախաղեաւ են: Այդուհանդերձ, նշված անդրադարձները, հղումները, ակնարկները զարմանալիորեն ճշգրիտ պատկերացում են տալիս այն հայեցա-

կարգերի մասին, որոնց վրա դարերով հիմնվել է հեռավոր ասիական երկրի յուրօրինակ մշակույթը:

Նրին տրամադրությունների քմահաճ խաղը, «Խսե Մոնոզատարի» ժողովածուի բարեկրթության ոգին և հոգեբանական խորիմաստությունը, Հեյանի ժամանակաշրջանը՝ իր գեղագիտական հավատամքով, որը մարմնավորվել է Մուրասակի Շիկիբուի «Ասք Գենջիի մասին» հոչակավոր վեպում, ճապոնական պոեզիայի հուզական շերտերի նրբազգացությունը, ճապոնիայի էպիկական անցյալի դրվագները, որոնցում փառաբանվում են պատվախնդիր սամուրայները, ճապոնական գրականության ժամանակակից դասական Ակուտագավա Շյունոսկեի ոճական առանձնահատկությունները և պրոբլեմատիկան. ահա ճապոնական մշակույթի այն հիմնական մոտիվները, որոնք գրավել են արգենտինացի մեծանուն մշակութաբանի և գրողի հետաքրքրությունը:

«Ըստ իս, եթե նման, գրեթե նույնական երկու բուդիհայականություն կա, ապա դրանք են Բուդիհայի քարոզածը և այն, որը հիմա ուսուցանում են Զինաստանում ու Ճապոնիայում՝ ծեն-բուդիհայականությունը», - նկատում է Բորիսեսը /Բորիսես, 2016: 602-603/, որը բուդիհայական ուսմունքին նվիրել է «Մեկ լեզենդի տարբերակները» էսեն և «Յոթ երեկո» բանավոր շարքի «Բուդիհայականություն» դասախոսությունը, իսկ բուդիհայականության գաղափարներն արտացոլել է տարբեր պատմվածքներում:

Ուսմունքի փիլիսոփայական բովանդակությունն արտացոլյանք է գտել մի շարք լեզենդներում, որոնցում ընդհանրական է Բուդիհայի կերպարը: Ներկայացնելով այդ լեզենդներից մեկը՝ սանդալափայտե թասի պատմությունը, Բորիսեսը, կարծում ենք, վիճելի մեկնաբանություն է անում. «Հայտնի է, որ Բուդիհան կարող էր հրաշքներ գործել, բայց, ինչպես և Հիսուս Քրիստոսին, նրան տիհաճություն էին պատճառում հրաշքները, նրան տիհաճություն էր պատճառում դրանք գործելը» /Բորիսես, 2016: 602-603/:

Հուդայական և քրիստոնեական, ինչպես նաև տվյալ դեպքում ծեն-բուդիհայական մտածողությունների թվացյալ նմանությանն է անդրադառնում նաև հոգեբան Էրիխ Ֆրումը, մասնավորապես՝ գիտնականն ընդգծում է նշված մտածողությունների հիմնվածությունը «հարկադրանքի, իշխանության, արտաքին և ներքին աշխարհների ճնշման եսամոլական ծգոտումներից անհատի հրաժարման գաղափարի վրա» և «բաց, ընկալունակ, մշտարթուն, արտաքին աշխարհի կանչերին արձագանքելու ընդունակ» դառնայու անհրաժեշտությունը /Փրոմմ, 2011: 46/:

Սակայն, չնայած մակերեսային նմանությանը և համաձայնությանը, չի կարելի չհամաձայնել, որ խորքային ինքնության, ուսմունքների ծևակերպումների մակարդակում «քրիստոնեական պատկերացումները, որպես կանոն, մեկնաբանվում են այնպես, ասես մարդն իր ճակատագիրն

ամբողջությամբ հանձնում է հզոր և ամենակարող Հորը. այդ պարագայում կորչում է ինքնուրովնության, ամեն հնարավորություն» /Փրօմմ, 2011: 47/: Ընդունելով բուդրիայականության բոլոր տարատեսակների, այդ թվում՝ ձեն ճյուղի և քրիստոնեության անկասկած նմանությունը՝ Բորխեսը, իր հերթին, մատնանշում է դրանց նշանակալից, հիմնավոր տարբերությունը՝ իբրև օրինակ վկայակորչելով դարբնի հյուղակի դրվագը, որտեղ Բուդրիան, աշակերտներով շրջապատված, վերջին անգամ քարոզում է նրանց. «Ձեզ եմ թողնում իմ Օրենքը» /Բորխես, 2016: 602/, ինչով կանխում է իր անձի աստվածացումը և ընդգծում է իր էության պատրանքայնությունը, մահկանացու բնույթը: Քրիստոն ասում է իր աշակերտներին, որ եթե նրանցից երկուսը հանդիպեն, ինքը կլինի երրորդը, ինչը ենթադրում է աստվածային թեև անտես, բայց մշտապես վերահսկող ներկայությունը, մինչդեռ բուդրիայական ըմբռնման համաձայն՝ «միայն Աստծուն մոռանալով՝ մարդը, որքան էլ դա պարագանքային լինի, հետևում է նրա կամքին» /Փրօմմ, 2011: 47/:

Ցանկությունների հնագանդեցումը, որը միաժամանակ բացառում է «Հոր աջակցությանը կուրորեն դիմելու» /Փրօմմ, 2011: 47/ հնարավորությունը, հանգեցնում է նիրվանայի՝ «դատարկության» դրականորեն մեկնաբանվող այն վիճակին, որը ձեն-բուդրիայականության մեջ անվանվում է «սատորի»:

Ֆրոմմը, առավելագույնս մոտենալով ձեն-բուդրիայականության էության ըմբռնմանը, մասնավորապես՝ ծանոթ լինելով դոկտոր Սուձուկիի դասախոսություններին և հիմնվելով հասանելի բոլոր աղբյուրների վրա, գրում է ինքնաճանաչողության, պայծառացման էմպիրիկ բնույթի մասին, որը բացառում է ճանաչողության որևէ մտավոր, ֆորմալ եղանակ. «Ձենը պահանջում է գիտակցության լիակատար ազատություն: Մեկ միտքն անգամ կարող է խոչընդոտ դառնալ և ծուղակ» /Փրօմմ, 2011: 104/:

Իրականության անխաթար, «ոչ մտավոր ընկալումը» /Փրօմմ, 2011: 99/, որն ընկած է ձեն հասկացության հիմքում, մեղիտացիայի երկար տարիներից հետո հնարավորություն է տալիս հասնելու պայծառացման: Ճշմարտության ճանաչողությունը վրա է հասնում անսպասելիորեն, ինչպես աստվածահայտնությունները, Զոյսի խոսքերով՝ այդ փիրուն և ակնթարթային հոգեվիճակները: Ձեն ուսմունքը բացատրելով՝ Բորխեսը նշում է, որ սատորին տրամաբանության հետ ոչ մի կապ չունի, և պայծառացումը «կտրուկ է վրա հասնում, առանց մի շարք եզրահանգումների» /Բորխես, 2016: 610/: Անգամ «ճշմարտություն» բառի կոննոտացիան այստեղ բավականաչափ տարբերվում է այդ հասկացության քրիստոնեական մեկնաբանությունից, ինչը վկայում է մի բուռ տերևների լեգենդը, որը Բուդրիան մեկնում է ճշմարտության մասին հարց տվողին. անհատական ապրումը հակասում է հեղինակության կարծիքին և օբյեկտիվ սահմա-

նումներին: Այդ պատճառով «ձենի շրջանակներում մարդը պետք է ազատ լինի անգամ Աստծուց, ինչն արտահայտվում է «Բուդրիա անունն արտասանելիս մաքրե՛ք ձեր շուրթերը» ձենի ասույթի մեջ» /Փրոմմ, 2011: 105/: Այս պարագայում հնարավոր է, որ աշակերտի հարցին, թե ով է Բուդրիան, ուսուցչի «Չինարը այգին է» /Բորխես, 2016: 610/ պատասխանը կարող է ճշմարտությունն արթնացնել հենց իր անտրամաբանականության շնորհիվ:

Հաստատելով ձեն-բուդրիայականության տեսաբանների առաջ քաշած այն մոտեցումը, որ անհատական պայծառացմանը համարժեք ճշմարտությանը կարելի է հասնել սոսկ տրամաբանությունից գուրկ պատասխանի շնորհած հանկարծակի խորաթափանցության միջոցով, Բորխեսը մի շարք օրինակներ է ներկայացնում, հիմնականում՝ ձեն-բուդրիայականության առաջին պատրիարքը և ձեն ուսմունքի հիմնադիր Բուդրիայի կերպարի մասին: Այդ պատմություններում գլխավոր և որոշիչ գաղափարը առկա ամենի անիրականությունն է, անցյալ գոյության և մեր սեփական «Ես»-ի պատրանքային բնույթը: Այս գաղափարը համահունչ է Բորխեսի ստեղծագործության մեջ երազի թեմային, ըստ որի՝ «Բորխեսի ամբողջ անցած կյանքը երազ է, տիեզերքի ամբողջ պատմությունն իսկ երազ էր» /Եօրքես, 2001, թ.4: 87/, և սուլը Ավգուստինուսի այն մտքին, որ, փրկության հասնելով, մենք բարիք ենք գործում՝ չմտածելով դրա մասին:

«Բուդրիայի ութմասնյա ճանապարհին անշեղելիորեն հետևելու պահանջից» /Եօրքես, 2001, թ.4: 309/ ազատ, բարոյականության խիստ կանխադրույթներին անձանոթ, բարուց և չարից անդին է նրբակիրթ պալատական Արիվարա Նարիկիրան, որի բանաստեղծական կերպարին նվիրված 125 մանրապատում, «Հին ժամանակներում ասպետը (ավելի հազվադեպ՝ տիկինը կամ միկադոն)…» թեմատիկ տողով սկսվող թանկաների ուղեկցությամբ, համախմբված են X դարի «Իսե Մոնոգատարի» նրբահյուս վիպակի մեջ՝ «դարի, որը Ճապոնիային, ճապոնական գրականությանը այդ երկրի սրանչելի բանարվեստի գեղարվեստական երեք տարբեր բարձունք զբաղեցնող երեք ստեղծագործություն է տվել» /Orr, Billy, 1999: 10/ (խոսքը ճապոնական հին և նոր բանաստեղծությունների «Կոկին Վակաչու» անթոլոգիայի (ճապոնական թանկաների ժողովածու) և հոչակավոր, կոթողային «Փայլուն արքայազն Գենջին» («Գենջի-Մոնոգատարի») վեպի մասին է, որն անհամար նմանակումների աղբյուր է դարձել): «Եյան՝ պերճախոս անվամբ ժամանակաշրջանի չգրված օրենքը, նախատեսում էր «նրբին տրամադրությունների և դրանց հետ կապված գործողությունների քմահաճ խաղ»), որտեղ «տգեղ որևէ բան անթույլատրելի էր» /Orr, Billy, 1999: 15/, իսկ կարևորագույն սկզբունքն էսթետիզմն էր:

Նշված շրջանի ճապոնիայում, բարեկրթության իդեալը չէր հանդուրժում որևէ կոպտություն, անքաղաքավարություն, անտեղյակություն նրբանաշակ վարվեցողության և բանաստեղծական արվեստի նրբություններին, արտաքին տծնություն, ինչպես միջնադարյան Եվրոպայի պալատական մշակույթը, և պատահական չէ ալբայի կամ պաստորելայի համեմատությունն «Իսե»-ի հիմքում ընկած քնարեղգության հետ՝ «քնության, հարակիութիս օրերի և տարվա եղանակների, սիրո ուրախությունների և վշտերի» պատկերներով /Եօրքէ, 2001, թ.4: 309/: Նարիհիրա արքայազնը՝ «հեթանոսության մեղազուրկ աշխարհի այդ հեղոնիստը» /Եօրքէ, 2001, թ.4: 309/, գրքի քնարական հերոսն է, առնական գեղեցկության խորհրդանիշ և Գենջի արքայազնի հնարավոր (ի թիվս այլոց) նախատիպ, որի կերպարի արձագանքները կարելի է գտնել արևմուտքում՝ Դոն Ժուանի անթիվ վերամարմնավորումներում, Լակլոյի նրբորեն պրովոկացիոն «Վտանգավոր կապեր»-ում, Պրուստի հերոսների սիրային ապրումներում:

«Իսե Մոնոգատարին»՝ ճապոնական պոեզիայի ամենավաղնջական նմուշներից մեկը, իր թեմայով և բովանդակությամբ էպիկական իդեալից հեռանում է սիրային ապրումների աշխարհ՝ ազգային պոեզիան օժտելով նոր՝ ներհայեցողական ասելիքով: «Ճապոնիայի պատմությունն էպիկական է եղել, բայց, ի տարբերություն այլ երկրների, դրա պոեզիայի գիսավոր նյութը բնավ սուրը չէ» /Եօրքէ, 2001, թ.4: 309/: Անանուն հեղինակի միջնադարյան բանաստեղծությունների ժողովածուն լի է կերպարներով, որոնք «սուտասանների համբավ ունեն» /Եօրքէ, 2001, թ.4: 30/, քանի որ բանահյուսական աղբյուրներից՝ սիրային սյուժեով հեթարքներից և առասպելներից բխող «Մոնոգատարի» անվանումն իսկ ակնարկում է, որ «դրանում ընդգրկված բոլոր պատմությունները հորինվածք են» /Եօրքէ, 2001, թ.4: 309/:

Ճապոնիայի երկրորդ կայսրութու շրջապատից պալատական տիկին Մուրասակի Շիկիրովի գիրքը, որն իր հերթին լի է հորինված կերպարներով, Հեյանի ժամանակաշրջանի արքունիքի փաստացի վկայություն է և «բարի բուն իմաստով հոգեթանական վեպ» /Եօրքէ, 2001, թ.1: 451/:

Հեյանի ժամանակաշրջանի գալստյան պահից կանայք և՝ կյանքում, և՝ գրականության մեջ առաջնային, եթե ոչ գիսավոր տեղ են զբաղեցնում, իսկ հետագայում Եվրոպացի ռոմանտիկների շրջանում այնքան սիրված գեղեցկություն-պոեզիա-ճշմարտություն եռամիասնությունը ենթադրում էր, որ չընաղ բանաստեղծություններ հորինող կինը պետք է շատ գեղեցիկ լինի. բանաստեղծական արվեստը և մարմնական գեղեցկությունը փաստորեն միահյուսված էին: «Ի ծնե բարձր խավին պատկանող կինը (...) ամենից հաճախ թաքնված է օստար հայացքներից, և նրա մեջ կարելի է գուշակել ամեն առաքինություն» /japanlib.narod.ru>gendzi>tom1/, բայց և

այնպես, նրան սքողող շղարշները գոնե զգացողությունների մակարդակում չէին կարող թաքցնել բնատուր սեթևանքը, սեփական կանացի գրավչության գիտակցման հրապուրը: Իզուր չէ, վեպի նուրբ հոգեբանականության մասին խոսելիս Բորխեսը մեջբերում այն դրվագը, երբ վարագույրով սքողված կինը, նայելով ներս եկող տղամարդուն, որն իրեն չի կարող տեսնել, անգիտակցաբար շտկում է սանրվածքը /տե՛ս Բօրխես, թ.1, 2001: 451/:

Մեր օրերում տեսողական պատրանքները (մասնավորապես, հայտնի պտտվող օձի պատկերը) մեծ ճանաչում են բերել կիոտոցի կոգնիտիվ հոգեբան Ակիոշի Կիտառկային, իսկ Բորխեսը դեռ իր պատմվածքում հրավիրում է մեր ուշադրությունը ավելի քան հազար տարի առաջ ստեղծված վեպի «տեսողական պլանի երևոյթի» /Մայերս, 2006: 255/ վրա, որն ի հայտ է գալիս, օրինակ «մանրամադ անձրևի պատճառով շատ ավելի հեռու թվացող» ընդարձակ թաց կամրջի դրվագում /Բօրխես, 2001, թ.1: 451/: Ու թեև «երկու-երեք առանձին տողում հնարավոր չէ զետեղել ծավալուն վեպի հիսունչորս գլուխը» /Բօրխես, 2001, թ.1: 452/, գոնե արևելյան մշակույթի համար որոշիչ զգացողությունների մակարդակում, Բորխեսը փոխանցում է Հեյանի գեղագիտական հավատամքով պայմանավորված հուզական կառուցիչ նրբությունը:

Բորխեսը համառոտ և, ինչպես ինքն է նշում, «կիսատ» /Բօրխես, թ.4, 2001: 450/ մի ակնարկ է նվիրում նախնական վեց «մեծածավալ հատորները» /Բօրխես, 2001, թ.4: 451/ մեկ «հարմարավետ գրքում» /նույն տեղում/ ամփոփող հոչակավոր «Ասք Գենջիի մասին» վեպին: Նշելով եվրոպական ընկալման համար Մուրասակիի վեպի բարդությունը՝ Բորխեսը զուգահեռներ է անցկացնում արևմտյան դասական գրականության ականավոր ներկայացուցիչների՝ Սերվանտեսի և Ֆիլինգի հետ՝ նկատելով, որ «Գենջի Մոնոգատարիի» հեղինակի բախտն ընթերցողների հարցում ավելի է բերել, քան եվրոպացի գոռղներինը. «Նկատի չունեմ, թե Մուրասակիի լայնածավալ վեպն ավելի հզոր է, ավելի խորն է մնում հիշողության մեջ կամ ավելի «լավն» է, քան Ֆիլինգի կամ Սերվանտեսի ստեղծագործությունները. միայն ուզում եմ ասել, որ այն ավելի բարդ է, իսկ քաղաքակրթությունը, որը ենթադրում է, ավելի նուրբ է: Այլ կերպ ասեմ. ես չեմ պնդում, որ Մուրասակի Շիկիբուն օժտված է Սերվանտեսի տաղանդով, միայն պնդում եմ, որ նրա ընթերցողն ավելի նրբազգաց է» /Բօրխես, 2001, թ.4: 451/:

Միևնույն ժամանակ, միջնադարյան ճապոնական մշակույթի էթիկան հասկացությունները, նորմերը, խիստ չգրված օրենքներն արտահայտված են քառասունյոթ ռոնինի հոչակավոր սյումենում, որոնց արդար վրեժը, ի վերջո, տապալում է իրենց նախկին դեկավարի՝ Ակո աշտարակի տիրակալի վախճանում մեղավոր պաշտոնյային: «Անփառունակության

համաշխարհային պատմություն» շարքի «Անքաղաքավարի արարողապետ Կոցուկե-նո-Սուկեն» վերնագրի ներքո խմբված միկրոնովելներում Բորիսեսն առաջարկում է իր, ինչպես միշտ, վավերագրությանը սահմանակից պատումն անմահ սխրանքի մասին, որն արտացոլվել է «հարյուրավոր վեպերում, մենագրություններում, ատենախոսություններում և օպերաներում... ճենապակով, նախշազարդ լազվարդով և ջնարակով զուգված զմայլանքներում»: Գրողը եզրակացնում է, որ քառասունյոթ հավատարիմ ռազմիկների այդ պատմությունը «մենք՝ հավատարմության զգացումից գուրկի, բայց այն վերգտնելու հովսը երբեք չկորցնող մարդիկս, հավերժ փառաբանելու ենք մեր խոսքով» ([biblio3.url.edu.qt>Libros>borges>inf.](http://biblio3.url.edu.qt/Libros/borges>inf.)):

Վաղուց անցած իրադարձությունների վերապատման՝ դեռ «Իսե»-ի ժամանակներից հայտնի հնարքը ճապոնական գրականության ժամանակակից դասական Ակուտագավային թույլ է տալիս «իրադարձությունը տեղափոխել անցյալ, պատմել դրա մասին, ասես այն վաղնջական ժամանակներում է տեղի ունեցել՝» պատումի նյութ դարձնելով «արտասովոր իրադարձությունը» /Стругацкий, 1976: 13/:

Ուստի, օրինաչափ է գրողի անդրադարձը Տակումի-նո-Կամի հավատարիմ սամուրայների վրեժի պատմությանը («Օիշի Կուրանոսուկեն իր կյանքի օրերից մեկում» պատմվածքը), քանի որ, ինչպես նշում է Բորիսեսը, «Ակուտագավայի առաջադրած գիշավոր խնդիրներից մեկն էր իր ժողովորի ավանդույթների և զրույցների նոր, հոգեբանական մեկնաբանությունը» /Борхес, 2001, թ.2: 728/:

«Ինչ-որ թաքնված թախիծ, արտաքին երևույթների նկատմամբ ուշադրությունը, վրձնահարվածների թեթևությունը» /Борхес, 2001, թ.2: 727/ հատկություններ են, որոնք, ըստ Բորիսեսի, բնորոշ են թե՛ իր մեջ արևելյանն ու արևմտյանն ընդելուզող Ակուտագավայի արձակին, թե՛ առհասարակ ճապոնական գրականությանը, որի հանդեպ սերը ստիպում է արդեն կոյսր Բորիսեսին 1979-ին ճամփորդել Ծագող արևի երկիր՝ անձամբ ապրելու դրա մտածելակերպից և մշակույթից ծնունդ առած այն զգացողությունները, որոնք նա այնքան տեսանելիորեն վերստեղծել և փոխանցել էր իր երկերում ամբողջ կյանքի ընթացքում:

Արգենտինացի լրագրող Օսվալդո Ֆեռարիի հետ 1984 թվականի մարտից քաղաքային ռադիոյով հեռարձակված իր զրույցների շարքում Բորիսեսը, անդրադառնալով իռլանդացի բանաստեղծ Ովիլյամ Բաթեր Յիթսի պոեզիայի առանձնահատկություններին, հիշատակում է վերջինիս տարվածությունը ճապոնական կարուկի թատրոնով, որը ճապոնիա ուղևորության ժամանակ հմայել էր նաև իրեն՝ Բորիսեսին: Չնայած այն բանին, որ Բորիսեսը և իր անքածան ուղեկցուիին՝ Մարիա Կոդաման, նախատեսել էին թատրոնում մնալ ընդամենը մեկ ժամ, նրանք անցկացնում

Են այնտեղ ամբողջ օրը՝ լուսաբացից մայրամուտ. «Եվ ի վերջո... ի վերջո, ճապոնական թատրոնն ինձ նվաճեց: Այդ անշտապողականությունը, դերասանների դանդաղկոտ շարժումները... Օրինակ՝ դերասանը պահել է ծեռքը կզակի մոտ ու պետք է իջեցնի. նա դանդա՞ղ-դանդաղ է իջեցնում ծեռքը, շարժումը տևում է ամբողջ տասը րոպե: Նրանց խոսքը նույնպես դանդաղ է: Դահլիճը լուսավորված է, հանդիսատեսների ծեռիչն տեքստով թերթեր կան: Բոլորն անգիր գիտեն պիեսը, և երբ արտաքերվում է խոսքը, նրանք ուշադիր հետևում են դերասանների խաղին» /Ferrari, 2005: 215/: Ինչպես Բորիսեսն է նշում, ճապոնական «շրեղ և արհեստական» կարուկի թատրոնը, որտեղ ամեն բան այնքան պատրանքային է թվում, այնքան տարբերվում է սովորական առօրեականությունից, թերևս հենց իր դանդաղկոտության, անշտապ շարժումների, «մեր ականջին խորթ երաժշտության» պատճառով /Ferrari, 2005: 214/ արգենտինական տանգոյի և միլոնգաների կրակոտ տեմպին սովոր, նրանք բարձր գնահատող և իր ստեղծագործություններում բազմից գովերգած Բորիսեսին սկզբում անտանելի էր թվացել:

Հանդիսավոր կարուկի թատրոնի վերաբերյալ մտորումները և դրանից ակնկալվող տպավորությունն արտահայտված են «Երաժշտական արկղ» բանաստեղծության պատկերներում.

«Ճապոնական երաժշտություն:

Ժլատաբար

Զրի ժամացույցից զատվող

Դանդաղ մեղրի կամ անտես ոսկու կաթիլներ,

Որ ժամանակի մեջ կրկնում են

Հավերժական և դյուրաբեկ, խորհրդավոր և պարզ մի սյուժե:

(Տողացի թարգմանություն.

«Música del Japón.

Avaramente

De la clepsidra se desprenden gotas

De lenta miel o de invisible oro

Que en el tiempo repiten una trama

Eterna y frágil, misteriosa y clara.» (իսպ.):

1977 թվականին գրված բանաստեղծությունը, այդպիսով, յուրօրինակ կերպով ամփոփում է ճապոնական մշակույթի ներշնչած զգացողությունները, որոնք Բորիսեսն ապրել էր արևելյան երկրի գրական կոթողներին իր ծանոթության միջոցով և, որոնք դեռ պետք է ապրել ճապոնիայով իր ճանապարհորդության ժամանակ: Տարածամանակային ամբողջականության մեջ «հեռավոր գալիքից» հասնող հնչյունները խոստանում են ճապոնիայի հատկանշական բնանկարների՝ «տաճարի», «լեռնային պու-

րակի», «անձանոթ ծովի» տեսարանները, որոնք հետագայում հայտնաբերելու է բանաստեղծը:

Բորխեսի հետ իր ռադիոգույցների ներածական խոսքում Օ. Ֆեռարին նկատում է. «Բորխեսի հետ երկխոսությունը մուտք է գրականության աշխարհ, ինզու հպում է գրականությանն առնչվող յուրաքանչյուր հարցի, որ գրադեցողել է գոռոյին, իսկ զրոյցն օգնում է գտնել նրա մտքի ստեղծած առինքնող աշխարհի բանալին, մտքի, որն ի զրու է նոր իրականության բացահայտելու և նկարագրելու» /Ferrari, 2005: 192/: Արևելքի, մասնավորապես՝ կղզային ճապոնիայի խորհրդավոր աշխարհով, մշակույթով և գրականությամբ տարված Բորխեսը բացահայտում է այն ընթերցողների առջև՝ փոխանցելով իր սեփական հափշտակությունը «առօրեական իրականությունից» /Ferrari, 2005: 214/ կտրված այդ աշխարհով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բորխես Խ. Լ. Երկու արքաներն ու Երկու լաբիրինթոսները, Երևան, Ապուլոն, 1992:
2. Բորխես Խ. Լ. Հավերժության պատմություն (ինքնակենսագրություն, դասախոսություններ, էսսեներ), Երևան, Սարգիս Խաչենց – Փրինթինֆո – Անտարես, 2016:
3. Ferrari O. En Diálogo, Volumen 1. Siglo XXI, 2005.
4. Борхес Х.Л. Собр.соч в 4 томах. СПб. Амфора, 2001.
5. Иса Моногатари. Перевод, статья и примечания Н.И.Конрада. М.: Наука, 1979.
6. Майерс Д. Психология. Минск: Поппурі, 2006.
7. Стругацкий А. Три открытия Акутагавы Рюнескэ // Акутагава Рюнескэ. Новеллы. М.: Художественная литература, 1976.
8. Фромм Э. Дзэн-буддизм и психоанализ. М.: Астрель, 2011.
9. japanlib.narod.ru>gendzi>tom1, ստուգված է 17.11.21-ին
10. El incivil maestro de ceremonias Katsuke no Suke. HISTORIA UNIVERSAL DE LA INFAMIA // URL: biblio3.url.edu.qt>Libros>borges>inf.

Н. ГОНЧАР-ХАНДЖЯН, Г. ГРИГОРЯН – Японские мотивы в текстах Борхеса. – Статья посвящена обращению видного мыслителя, писателя Х. Л. Борхеса к японской культурной традиции в литературе, ее сюжетам и персонажам, а также распространенному на Востоке японскому варианту буддизма, философскому осмыслению дзэн-буддийского учения. Великий аргентинский писатель и культуролог Х. Л. Борхес затрагивает ряд основных мотивов японской

культуры, таких как эмоциональные пласты поэзии, современные стилистические особенности, эпизоды эпического прошлого, психологическая глубина, честь и др.

Ключевые слова: японская литература, традиции, концепция дзен-буддизма, Исе Моногатари, Акутагавы Рюносукэ, принц Гэндзи

N. GONCHAR-KHANJYAN, G. GRIGORYAN – Japanese Motives in Borges's Texts. – The paper is dedicated to the prominent thinker, writer J. L. Borges's reference to the Japanese cultural tradition in literature, its plots and characters, as well as the Japanese version of Buddhism, which is widespread in the East, the philosophical understanding of Zen-Buddhist teachings. The great Argentine writer and culturologist J. L. Borges touches upon a number of main motives of Japanese culture, such as the emotional layers of poetry, modern stylistic features, episodes of the epic past, psychological depth, honour, etc.

Key words: Japanese literature, traditions, Zen-Buddhism concept, Ise Monogatari, Akutagawa Ryunosuke, Prince Genji

Received: 01.03.2022

Revised: 14.04.2022

Accepted: 17.06.2022

Ամայա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԱՏԱՐԱՆԴԻ ՆԱԲՈԿՈՎԸ ԵՎ ՆՐԱ ԼՍԱՐԱՆԸ

Նաբոկովի՝ որպես աքսորյալի մասին խոսելիս պեղք է հասկանալ, որ նա վրարանդի է Խորհրդային Ռուսասփանից, և որ նրա գեղարվեստական գրականությունը արդահայլում է անհետացած աշխարհի արձագանքները: Թեև «աքսոր» սովորաբար բացասական մկրեր է առաջացնում՝ կորուս, մերժում, ժխչում, դժբախտություն և դժվարություն, այն կարող է նաև ազագագրող լինել: Նաբոկովը վրարանդի գրողի օրինակն է, ով վայելում էր իր առջև բոլորովին նոր աշխարհ: Նրա գեղարվեստական գրականությունը, ընդհանուր առմամբ ապացուցում է դա:

Բանալի բառեր. աքսոր, ինքնություն, մերժում, ժխչում, վրարանդի, գաղթական, արգելված գրականություն, ներգաղթյալ, արվեստագետ, հիշողություն, հայրենասիրություն

Վլադիմիր Նաբոկովը գրում էր «հիմնականում արվեստագետների, արվեստագետ ընկերների և հետևորդների համար» /Nabokov, 1990: 41/: Նա ակնկալում էր, որ իր գրքերը կլարդան այն մտավորականներն ու արվեստագետները, ովքեր ընդունում են նրա հեղինակությունը և արժևուրում արվեստը: Հարցազրույցներից մեկում հեղինակը շատ դիպուկ նկարագրել է իր ընթերցողին.

«Իմ բոլոր գրքերը հասցեագրված են ո՞չ «հիմարներին»՝ այն տականքներին, ովքեր հավատում են, որ ես սիրում եմ երկար լատինատառ բառեր, ոչ էլ ուսալ անչափահասներին, ովքեր սեռական կամ կրոնական այլաբանություններ են գտնում իմ գեղարվեստական գրականության մեջ: Ո՞չ, իմ գրքերը հասցեագրված են Աղամ ֆոն Լ.-ին (Աղամ ֆոն Լիբրիկովը Նաբոկովի անվան հերթական անգրամն է), իմ ընտանիքին, մի քանի խելացի ընկերներին և աշխարհի բոլոր ծայրերում գտնվող ինձ նման բոլորին՝ Ամերիկայից մինչև Ռուսաստանի մղջավանջային խորքերը» /Nabokov, 1990: 196/:

Համեմատելով Նաբոկովի գեղարվեստական աշխարհի դիկտատուրան իր ընթերցողների պահանջների հետ՝ Փայֆերը նկատում է, որ, ի տարբերություն ռեալիստների, Նաբոկովը չի «հոչակում աշխարհիկ հեղինակություն կամ ամենակարող սոցիալական իմաստություն», փոխարենը «գործադրում է ինքնազիտակցական արհեստավարժություն՝ հետևելու իր ազդեցության ոլորտի սահմաններին, ինչպես նաև գեղարվեստական

ստեղծագործության հաճույքներին» /Pifer, 1978: 57/: Նրա իդեալական լսարանը պետք է բաղկացած լինի մարդկանցից, ովքեր կասկածի տակ չեն դնում իր գրականությունը: Նաբոկովը հույս է հայտնում, որ նման լսարանը իրեն «հավանելու արժանի և ոչ այդքան տհաճ անձնավորություն» կհամարի: Նա փնտրում է ընթերցողների, ովքեր կարող են ընդհանրություններ գտնել, հավատալ և ընդունել վտարանդու աշխարհի մասին իր վարկածը:

Նաբոկովի լսարանի ընկալումը, անշուշտ, բարդանում էր նրանով, որ նա ուներ երկու էական, բայց շատ տարբեր լսարաններ՝ ամերիկյան և ռուսական: Անզերենով ստեղծագործելը նրան չխանգարեց կապ պահպանել իր ոռու ընթերցողների հետ Միացյալ Նահանգներում և Խորհրդային Միությունում: Նրա առաջնային մտահոգությունը վերաբերում էր այն ընթերցողներին, ում համար իր ստեղծագործությունները հասանելի չեն: Վտարանդիների և գաղթականների մասին իր ուսումնասիրության մեջ Մըքքարթին նկատում է, որ «եթե աքսորյալը հեղինակ է, նա իրեն աքսորել է իր ընթերցողներից. տանը նրա գրքերն արգելված են» /Nabokov, 1990: 158/: Սա որոշակիորեն ապակողմնորոշիչ հայտարարություն է, որը վերաբերում է Նաբոկովին, քանի որ այն ենթադրում է վտարանդու անտարբերությունն իր հայրենի երկրի ընթերցողների նկատմամբ: Դա, անշուշտ, չէր վերաբերում Նաբոկովին, ում նողկանքը Խորհրդային Միության հանդեպ չէր խանգարում նրան շփվել ամբողջ աշխարհի (նույնիսկ երկաթե վարագույրի ետևում) իր ընթերցողների հետ, այն ընթերցողների, ովքեր ընդունում էին իր տաղանդը և մաքսանենգ ճանապարհով արգելված գրքեր տեղափոխում իրենց երկիր: 1969 թվականին տված հարցազրոյցում Նաբոկովն ակնարկում է «Ռուսաստանում ապրող ընթերցողի երեկովա նամակ»-ի մասին, որը վերահաստատում է նամակագրությունը նրանց հետ, ովքեր հիանում են իրենց աքսորված հայրենակցով: Նաբոկովը նման նվիրվածությունն ընդունում է որպես հերոսություն և որպես բողոք կոմունիստական ռեժիմի դեմ. «Ես կցանկանայի շատ բան ասել Ռուսաստանում իմ հերոս ընթերցողների մասին, բայց ինձ խանգարում են դա անել. բացի պատասխանատվության զգացումից, ես դեռ չեմ կարողանում գլուխ հանել բազմաթիվ զգացմունքներից» /Nabokov, 1990: 192/: Նա պետք է ի վերջո ընդունի այն փաստը, որ իրեն այնքան էլ շատ չեն կարդում այն լեզվով, որը նա գիտի, նույնիսկ ավելի լավ, քան այն, որը նրան միջազգային համբավ է բերել, բայց նրա ստեղծագործության մեջ մշտապես առկա է մնայուն հույս, որ մի օր ամեն ինչ կարող է փոխվել: Նաբոկովի երազանքը, որ իր գրքերը մի օր հասանելի կդառնան ոռու ընթերցողին, իրականություն դարձավ նրա մահից մեկ տասնամյակ անց: Սովետական հանրագիտարանային բառարանի երկրորդ հրատարակությունը, որը հրատարակվել է 1982

թվականին արդեն ներկայացնում է Նաբոկովի կենսագրության հետևյալ ամփոփագիրը.

«Ռուս-ամերիկյան գրող, Վ.Դ. Նաբոկովի որդին: Վ.Ն. գրել է ռուսերեն և անգլերեն (1940 թ.-ից): Վ.Ն. հեռացել է Ռուսաստանից 1919 թվականին: Վ.Ն. մեկնել է Միացյալ Նահանգներ 1940 թվականին» /Prokhorov, 1982: 862-863/: Հայտնի են Նաբոկովի հետևյալ ստեղծագործությունները՝ «Լուժինի պաշտպանություն», «Նվեր», «Գլխատման հրավեր», «Լոլիտա» և «Եվգենի Օնեգին» (թարգմանություն): Ինչ վերաբերում է մյուս գրողների ստեղծագործություններին, ապա Բունինի նույնքան կարճ ակնարկը տալիս է ամփոփում, որն առնվազն հղում է անում նրա ստեղծագործության հիմնական ազդեցություններին և ավանդույթներին: Թվում է, որ Նաբոկովի դեպքում հատողի խմբագիրները դա անհրաժեշտ չեն համարել, սակայն աքսորին դիմակայելը կարող էր թվարկվել որպես նրա ստեղծագործության կենտրոնական թեմաներից մեկը: Նաբոկովն աքսորը պատկերում է որպես մահվան դատավճիր կամ հնարավորություն՝ թույլ տալով ընթերցողին որոշել՝ նրա վեպերի հերոսները հաղթող են, թե զոհ: Ստեգները պնդում է, որ այն փաստը, որ Պնինը «երբեք չի ընկղմվում ինքնախղճահարության մեջ կամ չի ընդունում համեստ կեցվածք ու դիրք», նրա հաջողության գրավականն է, ինչի հետևանքով մենք նրան ընկալում ենք որպես «ավելին, քան ամբիցիոն, եսակենտրոն, ուժնացված մշակույթի խղճուկ զոհ, որից նա աքսորված է, և որտեղ նա միշտ աքսորված է լինելու» /Prokhorov, 1982: 16,98/: Ի հակադրություն, նա Քինբոտին անվանում է «զոհի գրոտեսկային ծաղրերգություն, ով ակամա դատապարտում է իրեն խելագարության, համասեռամոլության և հալիտողի համար» /Stegner, 1966: 16/: Պնինի և Քինբոտի համադրումը ցույց է տալիս, թե մարդիկ որքան տարբեր են դիմագրավում արտագաղթի մարտահրավերներին, և ինչու են նրանցից ումանք հաջողության հասնում, իսկ մյուսները՝ ձախողում:

Թոքերը պնդում է, որ «Նաբոկովի գրչի տակ ոուս ներգաղթյալի կերպարն Ամերիկայում դառնում է աքսորի արվեստի, արտագաղթելու կամքի, այդ կամքի բարոյականության, խղճի անհանգստության և կյանքի հանդեպ սիրո միջև հակասության ուսումնասիրություն» /Toker, 1989: 22/: Այնուամենայնիվ, Նաբոկովի աքսորի տարիներին իր տոկունության գաղտնիքը նրա ընտանիքի մեջ է՝ այն միակ բաղադրիչը, որը նկատելիորեն բացակայում է Պնինի և Քինբոտի կյանքում: Նաբոկովի կինն ու որդին օգնեցին հանգստացնել կորստի ցավն ու հիասթափությունը: Ընտանիքը օգնեց Նաբոկովին նաև զգալ իր ներսի արվեստագետի «տեղահանությունը». Տիմոֆեյ Պնինն իր «զինաթափող հնաոճ հմայքով» և Զարլզ Քինբոտը՝ իր ջերմեռանդ կրոռով՝ աշխարհին պատմելու այդ «հեռավոր հյուսիսային երկրի»՝ իր Չեմբլայի մասին /Nabokov, 1989: 98/: Նա-

բոկովն ասել է. «Ես միշտ, նույնիսկ որպես դպրոցական Ռուսաստանում, պնդել եմ, որ արժանավոր գրողի ազգությունը երկրորդական նշանակություն ունի» /Nabokov, 1990: 63/: Ըստ Էության, ամերիկյան մշակույթին միաձուվելու ցանկությունը՝ իր կողքին ունենալով կնոջն ու որդուն, օգնում է դիմակայել այն ցավին, որը նա գգում է իր հոր սպանության, 1917 թվականի հեղափոխության և Ռուսաստանը լքելու անհրաժեշտության պատճառով:

«Պնին»-ի և «Գունատ կրակ»-ի հերոսներն ավելի քիչ բախտավոր են: Հետաքրքիր է, որ բացի ընդհանուր թեմայից, այս վեպերը նաև որոշակի-որեն նման են կառուցվածքով, մասնավորապես այն գլխի մի մասը («Պնին»-ի Գլուխ Չորրորդը), որը Նաբոկովն ի սկզբանե գրել է իր ինդեքսային քարտերի վրա՝ նպատակ ունենալով օգտագործել դա որպես «Գունատ կրակ»-ի գլուխ: Այս գլուխն սկսվում է թագավորի՝ Վիկտորի Երևակայական հոր նկարագրությամբ, ով նախընտրում է «աքսորյալներին» և քինքության ոճով վերիիշում իր թագավորական անցյալը /Nabokov, 1989: 85/: Երկու ստեղծագործություններն էլ Նաբոկովի լեզվի տիրապետման հիմնալի օրինակներ են: Սա աննկատ չի մնում քննադատների կողմից. օրինակ՝ Բրաունը գրում է, որ «նման օտար ծագումով և խառնվածքով գրողին բնորոշ է բնիկ հեղինակների համար ոճային շատ հարցերում օրինակ ծառայելը» /Nabokov, 1989: 4/: Նացիստների կողմից մահապատճի ենթարկված Միրա Բելոչկինի՝ Պնինի հիշողությունը և ֆրանսիական Ռիվիերայի իր վիլայում լքված Քինքութի՝ թագուիի Դիզայնի կերպարը, անձնավորում են այն կարոտը, որ այս մարդիկ ունեն անցյալի հանդեպ, որը չի կարելի նորից վերապրել: Որքան էլ Պնինն ու Քինքուն առաջին հայացքից տարբերվում են, նրանք վճռական են պահպանել իրենց նախորդ կյանքի էությունը՝ լիովին գիտակցելով առաջադրանքի անհնարինությունը: Ինչ-որ առումով նրանք նույնպես աչքի են ընկնում ամբոխի մեջ այնպես, ինչպես Նաբոկովն էր աչքի ընկել իր ժամանակակիցների մեջ:

Հեղինակի ատելությունը խորհրդային կարգերի նկատմամբ չի բացառում իր ազգի հանդեպ հայրենասիրական զգացմունքները: Իր ողջ կյանքի ընթացքում նա հավակնում էր ապաքաղաքական դիրքի, սակայն չէր կարող անհաղորդ մնալ իր հայրենի երկրում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններին: Նա այդպես էլ ամբողջությամբ չկտրվեց Ռուսաստանից: Պնինի հետ նմանություններ առաջացնող նկարագրության մեջ Մըքքարթին նշում է, որ աքսորյալները ոչ միայն կախված են վոստից, այև «հայտնի թերթեր ընթերցողներ և թերթերի հատվածներ հավաքողներ են: Այն փաստը, որ իրենց երկրի մամուլը գրաքննության է ենթարկվում (ըստ Երևանյանի, նրանց աքսորի հետևանքը) ստիպում է նրանց ավելի շատ կարոտել ասեկուեներն ու տեղեկությունները, որոնք նրանք կարող են իրար կապել» /McCarthy, 1985: 70/: Նաբոկովն ուշադիր հետևում

Էր լուրերին և միշտ հաճույքով արտահայտում իր կարծիքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի սարսափները և Ռուսաստանի վճռորոշ դերը դրա ելքում առաջացրել են հայրենասիրության խորը գգացմունքներ: Նա Ռիլսոնին ուղղված նամակում գրում է Կարմիր բանակի հաղթանակի իր հույսերի մասին.

«Շուրջ 25 տարի վտարանդի ռուսները փափագում էին, որ ինչ-որ բան պատահեր, ինչ-որ բան, որը կկործաներ բոլշևիկներին, օրինակ՝ լավ արյունայի պատերազմ: Հիմա գալիս է ողբերգական ֆարսը: Իմ բուռն ցանկությունը, որ Ռուսաստանը, չնայած ամեն ինչին, կարողանա հաղթել կամ ավելի շուտ իսպան վերացնել Գերմանիան, որպեսզի աշխարհում գերմանացի չմնա, պետք է սայլը ծիուց առաջ դնել, բայց ծին այնքան զգվելի է, որ ես նախընտրում եմ դա անել» /Nabokov, 1990: 46/:

Միլիոնավոր մարդկանց մահվան պատճառ դարձած մարդկային ողբերգությունը ջնջում է բոլոր քաղաքական տարածայնությունները և ամրապնդում կապը Ռուսաստանի և նրա նախկին քաղաքացիների միջև: Այնուամենայնիվ, Նարոկովը կուրացած չէր հայրենասիրության ճնշող զգացումով, և պատերազմի ավարտին, երբ նացիստական բանակը ետ էր քաշվում, և հաղթանակը մոտ էր, նա բացահայտ դիմադրում էր Ստալինի և նրա ռեժիմի հանդեպ պաշտամունքին: Նրա ռուսերեն «Անկախ նրանից, թե ինչպես» պոեմը (1944), որը գրվել է Քեմբրիջում և հետագայում թարգմանվել է անգլերեն, արտացոլում է նրա դիրքորոշումն ընդդեմ տոտալիտարիզմի: Բանաստեղծը բողոքում է խորհրդային իշխանության կողմից խլված ազատությունների և ռուս ժողովրդին պարտադրված սարսափների դեմ.

«Անկախ նրանից, թե ինչպես է խորհրդային փայլագարդը շողում մարտական կտավի վրա, անկախ նրանից, թե ինչպես է հոգին լուծվում խորահարության մեջ, ես չեմ կոտրվի, չեմ դադարի զգմել լուր ստրկության կեղտից, դաժանությունից և ձանձրույթից: Ո՛չ, ո՛չ, բղավում եմ, հոգի դեռ առոյգ է, դեռ աքսորում քաղցած,

Ես դեռ բանաստեղծ եմ, հաշվի՝ առեք ինձ» /Nabokov, 1970: 1-8/:

Կշեռքի վրա են դրվել դրական և բացասական կողմերը, քանի որ բանաստեղծը վերահաստատում է իր դիրքորոշումն ընդդեմ ճնշող իշխանության՝ չնայած փառահեղ հաղթանակին: Բոյդը նշում է «սովետամետ Եյֆորիան», որը պատեց Երկիրը, և թե ինչպես Նարոկովը «զգաց, որ ժամանակն է բողոքելու Ռուսաստանի սեփական զանգվածային մարդասպանի հերոսացման դեմ, նույնիսկ եթե դա այն հասարակությունն էր, որը չէր ուզում լսել» /Nabokov, 1993: 60-61/: Հետաքրքիր է, որ բանաստեղծության ռուսերեն տարբերակի ճշգրիտ ձևակերպումը պարունակում է երեք բառ՝ «Սովետական Փայլագարդ Ռուս», որտեղ «Ռուս»-ը հին ռուսերենից «Ռուսաստան» է /Nabokov, 1970: 2/: Ռուսի և «սովետի» զուգա-

կցումը ամրապնդում է ավանդույթը քանդող ռեժիմի անվան հետ համատեղելու անհեթեթությունը: Բանաստեղծության անգլերեն տարբերակում Ռուսն ամբողջությամբ անհետանում է և թարգմանվում է որպես «Սովետական փայլազարդ», ճիշտ այնպես, ինչպես ռուսերեն բնօրինակից «ռաբստվո»-ն դառնում է «ծառայություն», որն այլապես բառացի կթարգմանվեր որպես «ստրկություն»: Նարոկով բանաստեղծ է, ով բողոքում է պատմության բռնակալների դեմ՝ պնդելով, որ աքսորը ճիշտ լրիցում է, եթե դիտարկվում է այլնտրանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. McCarthy M. Occasional Prose. San Diego: Harcourt Brace Jovanovich, 1985.
2. Nabokov V. Pale Fire. New York: Vintage Books, 1989.
3. Nabokov V. Pnin. New York: Vintage Books, 1989.
4. Nabokov V. Poems and Problems. New York: McGraw, 1970.
5. Nabokov V. Selected Letters 1940-1977. Fort Washington: Harvest Books, 1990.
6. Nabokov V. The American Years. Princeton: Princeton UP, 1993.
7. Pifer E. On Human Freedom and Inhuman Art: Nabokov // *The Slavic and East European Journal*, 22, 1978.
8. Prokhorov A. Nabokov V. V. // *Soviet Encyclopedic Dictionary*. Moscow: Soviet Encyclopedia, 1982.
9. Stegner P. Escape into Aesthetics: The Art of Vladimir Nabokov. New York: Dial, 1966.
10. Nabokov V. Strong Opinions. New York: Vintage Books, 1990.
11. Toker L. The Mystery of Literary Structures. Ithaca: Cornell UP, 1989.

Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ – *Изгнанный Набоков и его аудитория.* – Говоря о Набокове как об эмигранте, следует иметь в виду, что он был изгнан из Советской России и что его художественная литература отражает реакцию исчезнувшего мира в качестве компенсации за «незапланированный» отъезд из дома. Несмотря на то, что «изгнание» обычно вызывает негативные мысли – потери, неприятие, отрицание, несчастье и лишения – оно также может быть и «освобождающим». Набоков – пример писателя-эмигранта, которому нравилось иметь перед собой целый новый мир для изучения, использовать его как зеркало, чтобы противостоять старому миру и своему прошлому. В целом, его произведения доказывают это.

Ключевые слова: изгнание, личность, неприятие, отрицание, экспатриант, мигрант, запрещенная литература, иммигрант, деятель искусств, память, патриотизм

A. SOGHOMONYAN – *Exiled Nabokov and His Audience.* – When talking about Nabokov as an expatriate, it should be understood that he was exiled from Soviet Russia and that his fiction expresses the reactions of the disappeared world as a means of compensation for leaving home unplanned. Even though “exile” usually evokes negative thoughts – loss, rejection, denial, misfortune and hardship – it can also be liberating. Nabokov is an example of an exiled writer who enjoyed having a whole new world in front of him to study, to use it as a mirror to confront the old world and his past. His fiction, in general, seems to prove it.

Key words: exile, identity, rejection, denial, expatriate, migrant, forbidden literature, immigrant, artist, memory, patriotism

Received: 29.04.2022

Revised: 30.05.2022

Accepted: 17.06.2022

Натали ГОНЧАР-ХАНДЖЯН

Катя ТОВМАСЯН

Ереванский государственный университет

ТРАВЕСТИЯ ЗАГРОБНОГО ПУТЕШЕСТВИЯ В ДИПТИХЕ ЧАКА ПАЛАНИКА «ПРОКЛЯТЫЕ» И «ОБРЕЧЕННЫЕ»

